AZG NEW 1.QXD 6/15/2009 11:12 PM Page 1

Ազգ
Azg
16 ՅՈՒՆԻՍ 2009 ԵՐԵՔՇԱԲԹԻ 110 (4246)
ISSN: 1829-1651

## Զենք արտադրող ընկերություններ ընդդեմ հայկական բանաձեւի

Անգլիական, ամերիկյան զենք եւ նավթ արտադրող խոշոր 5 ընկերություններ քարոզչություն են տարել ԱՄՆ-ի Կոնգրեսում Ցեղասպանության բանաձեւի վավերացման դեմ: Իրենց այս գործունեությունը նրանք գաղտնի են պահել՝ վախենալով հասարակական կարծիքից: Ինչպես «Նյու Յորք թայմսն» է տեղեկացնում, մեկ անգլիական եւ չորս ամերիկյան ընկերությունները հայկական բանաձեւի դեմ հանդես գալու եւ այլ ծրագրերի քարոզչության համար ծախսել են 14 միլիոն ԱՄՆ դոլար: Այս ընկերությունները զենք են վաճառում Թուրքիային: Իրենց քարոզչության մեջ ընկերությունները նշել են, թե հայկական բանաձեւի վավերացումը դեմ է ԱՄՆ-ի ազգային շահերին, այս տեղեկությունը ավելի մանրամասն կարդացեք «**Ազգի**» վաղվա համարում:

# Կոնգրեսը գնաց «վաստակած հանգստի»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այսպիսով, մինչեւ սեպտեմբերի կեսը իշխանությունը ստացավ այն պակասող ժամանակը, որը նրան անհրաժեշտ է՝ վերադասավորելու ուժերը, նոր մեթոդներ որդեգրելու, «ուբոռկա» անելու սպառող ուժերի շրջանում, մարտավարություն եւ ռազմավարություն ընտրելու նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ, ինչը նախագահ Սարգսյանն այդպես էլ ժամանակ չէր ունեցել անելու: Մարտի 1-ի եւ հետմարտիմեկյան իրադարձություններն այնպիսի գլխապտույտ արագությամբ զարգացան, ընդդիմության գործելակերպն այնպես էր նրան մտահոգում, որ նա այդպես էլ երբեք ժամանակ չունեցավ շունչ առնելու եւ նոր՝ նախագահի ամբողջական կերպարի մեջ մտնելու, վերջնականապես աշխատանքի իր ընդգծված մեթոդները ցուցանելու համար:



Իսկ հիմա, վերջապես, ընդդիմությունը նրան այդ հնարավորությունը տալիս է, ինչպես, ի դեպ, քաղաքական դաշտի բոլոր դերակատարներին, որոնք այսու հանգիստ կարող են իրենց անելիքն ու գործելակերպը ողջ ամառ ճշգրտել:

Տես էջ 8

ՄՈՍԿՎԱ

# Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերը՝ իրականություն

## *ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահությունն ավարտվեց, բայց չսկսվեց Բելառուսինը*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ պետությունների ղեկավարները դեռեւս այս տարվա փետրվարին որոշել էին ստեղծել օպերատիվ արձագանքման հավաքական ուժեր (ՕԱՀՈՒ): Դրանց ստեղծման համաձայնագիրը եւ կից փաստաթղթերը, որոնք սահմանում են այդ ուժերի կարգավիճակը, ձեւավորման ու գործունեության կարգը, կիրառության կանոնները, հավաքական ուժերի կազմը, արդեն ստորագրված են:**

**Կիրակի օրը՝ մայիսի 14-ին Մոսկվայում՝ ՀԱՊԿ գագաթաժողովում կազմակերպության անդամ 7 երկրներից 5-ը ստորագրեցին արագ արձագանքման հավաքական ուժերի համաձայնագիրը: Փաստաթուղթը չեն ստորագրել կազմակերպության անդամ երկու պետություն՝ Բելառուսը եւ Ուզբեկստանը:**

**Գագաթաժողովին մասնակցելու նպատակով մեկօրյա աշխատանքային այցով ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի հերթական նիստին մասնակցելու համար Մոսկվայում էր Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը, որը, ըստ նախագահի պաշտոնական կայքէջի հաղորդագրության, նույն օրը ուշ երեկոյան վերադարձել է Երեւան:**



**Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը շնորհակալություն է հայտնել նախագահ Սերժ Սարգսյանին՝ կառույցում արդյունավետ աշխատանքի համար, հույս հայտնելով, որ ընդունված որոշումները կնպաստեն անդամ-պետությունների անվտանգության ամրապնդմանն ու հավաքական հակազդման լիարժեք ուժերի ստեղծմանը:**

Տես էջ 3

# Ահմադինեժադը վերընտրված է, ընդդիմությունը բողոքում է



Պաշտոնական տվյալների համաձայն, հունիսի 12-ին Իրանում անցկացված նախագահական ընտրություններում վերընտրվել է գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, որն ստացել է բոլոր քվեների 62,6 տոկոսը: Մինչդեռ նրա գլխավոր ախոյան Միր Հոսեյն Մուսավիի շտաբում խոսում են իրենց թեկնածուի հաղթանակի մասին:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Իրանի իշխանությունները Մուսավիի կողմնակիցներին արգելել են բողոքի ազգային երթ անցկացնել: Նախկին վարչապետ Մուսավին ծրագրել էր քվեարկության արդյունքների դեմ բողոքի երթ անցկացնել հունիսի 15-ին: Կիրակի օրը նա ներկայացրել էր համապատասխան հայց, ինչպես նաեւ ընտրությունների արդյունքները չեղյալ հայտարարելու պահանջով գանգատարկում:

Ըստ պաշտոնական տվյալների, Մուսավին ստացել է քվեների 33,75 տոկոսը: Նրա կողմնակիցները խոսում են տեղի ունեցած լուրջ ընտրախախտումների մասին:

BBC-ն հաղորդում է, որ կիրակի օրը ցուցարարների եւ ոստիկանների բախումների ընթացքում կալանավորվել են 170 ցուցարարներ: Իրանական Press TV հեռուստաալիքը հաղորդում է, որ Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին հավանություն է տվել ընտրությունների արդյունքներին եւ դատապարտել է բողոքի բազմամարդ ձեռնարկումները:

ՀՀ նախագահի նստավայրից հաղորդում են, որ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի վերընտրվելու առիթով նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական ուղերձ է հղել Մահմուդ Ահմադինեժադին:

# Հիմա Մեթյու Բրայզան դեսպա՞ն է դառնալու, թե՞ ոչ

Տարին մի տասնյակ անգամից ավելի շատ հարեւան Ադրբեջան այցելող ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան, ըստ Foreign Policy պարբերականի, ներկայացվել է որպես Ադրբեջանում ԱՄՆ դեսպանի պաշտոնի թեկնածու:

Նույն աղբյուրի համաձայն, Բրայզայի թեկնածությունն առաջարկել է ԱՄՆ պետքարտուղարի օգնական, Բրայզայի նախկին ղեկավար Դենիել Ֆրիդը: 2006-ի մայիսից Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Էնն Դերսիի պաշտոնավարումն ավարտվում է հուլիսին, եւ նա ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հրամանագրով արդեն նշանակվել է իր դիվանագիտական առաքելությունը շարունակելու Լիտվայում որպես ԱՄՆ դեսպան:

Ադրբեջանական լրատվամիջոցները միեւնույն ժամանակ տեղեկացնում են, որ Դենիել Ֆրիդն այս առնչությամբ որեւէ մեկնաբանություն չի տվել: Ադրբեջանական արտգործնախարարությունը եւս տեղեկացրել է, որ Ադրբեջանում Մեթյու Բրայզայի՝ ԱՄՆ դեսպան հավանական նշանակման մասին որեւէ տեղեկություն չունի:

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահը, ադրբեջանական ANS PRESS-ի ներկայացմամբ, հերքել է տարածված լուրը իրեն հատուկ մատուցմամբ: Մեթյու Բրայզան մասնավորապես նշել է. «Կարծում եմ, ակտիվ ներդրում եմ ունեցել ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահի լինելու իմ առաքելության ընթացքում»:

«Ես չեմ ծրագրում լքել ԵԱՀԿ Մինսկի խումբը հուլիսին: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով ավելի արգասաբեր աշխատանքի հույս ունեմ», նշել է ամերիկացի համանախագահը:

Ա. Հ.

# Հայ-սիրիական հարաբերությունները կարող են դառնալ ռազմավարական

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Հայ-սիրիական հարաբերությունների մասին կարելի է երկար խոսել, քանի որ հազարամյակներ շարունակ իրար կողքի ապրող մեր երկու ժողովուրդները ոչ միայն տնտեսական, այլեւ մշակութային ու պատմական շփումներ են ունեցել, ինչը հարստացրել եւ հզորացրել է երկկողմ կապը: Պատմական հարաբերությունների ընթացքում հատկապես կարեւոր, հանգրվանային տեղ է զբաղեցնում 1915-ի Ցեղասպանությունը, երբ Սիրիայի արաբները մեծ դեր խաղացին Դեր Զորի անապատներում հայտնված հայերի փրկության գործում: Հետագայում եւս Սիրիայում հանգրվանած մեծաթիվ հայկական համայնքը լայն աջակցություն ու օգնություն էր ստանում այդ երկրի կառավարությունից: 1991-ին Հայաստանի անկախացումից հետո Սիրիայի Արաբական Հանրապետությունը առաջին երկրներից էր, որ ճանաչեց եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի հետ: 90-ականների առաջին տարիներին, երբ Հայաստանը գտնվում էր քաղաքական, ռազմական եւ տնտեսական շրջափակման մեջ, Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Հաֆեզ Ասադի հրամանով մեր երկիրը ստացավ ցորենի եւ ալյուրի մեծ պաշարներ, ինչը լուրջ օգնություն էր պարենային դժվարության մեջ գտնվող Հայաստանի համար: Հայ-սիրիական հարաբերությունների բարձրակետը կարելի է համարել 1995 թվականը, երբ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը այցելեց Դամասկոս եւ Հալեպ, հանդիպում ունեցավ այժմ հանգուցյալ Հաֆեզ Ասադի հետ:




*Ֆոտոարխիվ.Հաֆեզ Ասադը Երեւանում, 1979 թ.:*

Տես էջ 4

# «Արմենիայի» երկու գերխնդիրները

Սփյուռքը ոչ միայն աշխարհագրություն է, այլեւ կենսագրություն: Դա եզակի համակարգային երեւույթ է պետականության տարրերով: Մենք հաճախ գործ ունենք կազմակերպված համայնքների, գործող եկեղեցիների, դպրոցների, կուսակցությունների, զանգվածային լրատվամիջոցների, հեռուստատեսության, կինոստուդիաների, մշակութային, բարեգործական, մարզական, հասարակական կազմակերպությունների եւ կառույցների հետ:

Եվ առաջին հայացքից ողբերգական թվացող այդ ազգային երեւույթի գերխնդիրն է պահպանել ինքնօրինակությունը եւ գործուն պատմական հիշողությունը: Քանի ողջ են տատիկներն ու պապիկները, տներում իշխում է հայկական ոգին, զգացվում է Հայաստանի բույրը: Եվ բոլոր ժամանակներում հայացքները հառված էին Արարատին:

Ժամանակ առ ժամանակ ինչ-որ մայր ցամաքում երեւում էին նորանոր գաղթականներ: Որպես կանոն, դա տեղի էր ունենում այն երկրներում, որտեղ հայտնվում էին տաղանդավոր ձեռնարկատերեր, որոնց շնորհիվ ծաղկում էին հայկական գաղթօջախները: Կառուցվում էին եկեղեցիներ, դպրոցներ, հուշարձաններ, թանգարաններ, գրադարաններ, որտեղ պահվում էին հայկական ձեռագրեր, թերթերի լրակազմեր: Վիեննա, Երուսաղեմ, Սուրբ Ղազար կղզի, Լիսաբոն, Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի, Ավստրալիայի, Աֆրիկայի եւ մանավանդ Մերձավոր Արեւելքի բազմաթիվ քաղաքներ, նախկին ԽՍՀՄ տարածք...

Երեսուն տարուց ավելի սփյուռքում ճանապարհորդելիս հաճախ մտածել եմ տարբեր վայրերում մեր հայրենակիցների ստեղծած եւ ինչ-ինչ պատճառներով այսօր անտեր մնացած պատմական ու մշակութային հուշարձանների ճակատագրի մասին:

«Կիլիկիա» առագաստանավով Եվրոպայի շուրջը նավարկելիս մենք շատ երկրներում նկարահանել ենք հայկական պատմամշակութային հուշարձաններ, թանգարանների ցուցանմուշներ: Արդեն այն ժամանակ միտք ծագեց ապագա ճանապարհորդությունների ժամանակ հեռուստատեսային նյութեր ժողովել ֆիլմի համար, որտեղ կարտացոլվեն բոլոր հինգ մայր ցամաքների բոլոր հուշարձանները (հատկապես եկեղեցիները):

Բնականաբար, դա անհնար է փոքր անձնակազմի համար, որի առջեւ կանգնած է եւս մեկ գերխնդիր՝ սփյուռքի ճանապարհներով պտտվել աշխարհի շուրջը: Ահա թե ինչու ռեպորտաժներում մենք հաճախ խոսում ենք այսպես կոչված ցամաքային անձնակազմի աշխատանքի մասին: Դրանք մեր բազմաթիվ հայրենակիցներն են, որոնք տեղերում նկարահանելու են հայկական հուշարձանները: Հայկական հուշարձանների տաղանդավոր հետազոտող Սամվել Կարապետյանի պատմավավերագրական ֆիլմերում առկա են մեր հուշարձանների մանրամասն նկարագրություններ: Իսկ մենք մեզ առաջադրել ենք ավելի համեստ խնդիր. «Արմենիայի» շուրջերկրյա նավարկության ընթացքում արձանագրել առանց բացառության բոլոր հուշարձանները: Խոսքը մեր նախնիների գործերի յուրօրինակ վիճակագրության, գույքագրման մասին է: Ամբողջը կարելի է հավաքել մի խտասկավառակի մեջ՝ թե՛ Սինգապուրում մոռացված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին եւ թե՛ վերջերս կառուցված հուշարձանները:





Հայկական եկեղեցիներ Կահիրեում եւ Ալեքսանդրիայում

Այն նավահանգիստներում, որտեղ խարիսխ կգցի «Արմենիան» այդ աշխատանքը կկատարի «Մեսրոպ Մաշտոց» գիտարշավի օպերատոր Հայկ Բադալյանը: Ավա՜ղ, հայկական հուշարձաններից շատերն առհավետ կորած են:

Ներկայումս գիտարշավի շրջանակներում արդեն աշխատանք է կատարվում Հյուսիսային Ամերիկայում: Մենք հեռախոսով Լուիզ Սիմոն-Մանուկյանին խնդրել ենք կազմակերպել հոր՝ Ալեք Մանուկյանի միջոցներով կառուցված բոլոր օբյեկտների (եկեղեցիներ, դպրոցներ, մարզասրահներ, համալսարանների ամբիոններ եւ այլն) նկարահանումները:

Վերջին պարբերությունը գրում եմ Մարոկկոյի մոտ գտնվող Սեուտե նավահանգստից, ուր մեզ այցելության եկավ եւ ճաշի հրավիրեց տեղացի գործարար Մեհդի Լարաքին, որը փոխշահավետ գործունեություն է ծավալել հայ գործընկերների հետ:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**
**Սեուտե, Իսպանիա**

ՀԱՄԱՌՈՏ

## Փոփոխություններ քննական առաջադրանքների գնահատման մեջ

**Գնահատման եւ թեստավորման կենտրոնից տեղեկացնում են, որ հայոց լեզու, գրականություն միասնական քննական թեստի Ա-45 առաջադրանքում Հովհ. Թումանյանի «Փարվանա» լեգենդին վերաբերող լուծման տարբերակը եւս համարվել է ճիշտ, այդ ենթահարցը որպես ճիշտ պատասխան նշած դիմորդների գնահատականը կբարձրացվի 0,25 միավորով: Այս առարկայից կազմակերպված մասնագիտական քննարկման ժամանակ մասնագետներն առաջարկել էին փոփոխություն կատարել Ա-45 եւ Բ-79 առաջադրանքների միավորներում: Մյուս առաջադրանքների վերաբերյալ առաջարկությունները մերժվել են մասնագիտական առումով անվիճելի լինելու հիմնավորումով: Մաթեմատիկա առարկայի բողոքարկման ժամանակ եւս մասնագիտական խմբի առաջարկով բողոքարկման հանձնաժողովը որոշել է մաթեմատիկայի միասնական քննության 1, 2, 3, 4 թեստերի համապատասխանաբար 59, 60, 61, 62 սխալ լուծած կամ չլուծած շրջանավարտների արդյունքները համարել դրական:**

## Ինչո՞ւ եւ ովքե՞ր են գողանում ծաղկամանները

**Մեկ ամիս առաջ Երեւանի քաղաքապետարանը Հոլանդիայից ներկրել էր պետունյա եւ կասարանտուս տեսակի ծաղիկներ պլաստմասսայե ծաղկամաններով ու դրանցով զարդարել էր կամուրջների բազրիքները, փողոցների գազոնների որոշ մասեր: Ավան եւ Նոր Նորք համայնքների ուղետար կամուրջների բազրիքներից մեկ շաբաթ անց արդեն մոտ 100 ծաղկաման գողացել էին: Գողացվածների տեղը նոր դարչնագույն ծաղկամաններ տեղադրվեցին: Սակայն այսօր արդեն դրանցից էլ մոտ 37-ը գողացել էին: Քաղաքի դենդրոլոգ Սուրեն Մաքսապետյանից «Ազգը» տեղեկացավ, որ հանձնարարվել է բոլոր գողացված ծաղկամանների տեղը նորերը դնել այնքան ժամանակ, մինչեւ վերջ կտրվի այդօրինակ ոտնձգությանը:**

**Կարծում եմ, ավելի լավ կլիներ, որ այդ ծաղկամանները զոդվեին կամ այնպես ամրացվեին հենապատերին, որ հնարավոր չլիներ դրանք հանել: Իսկ թե ինչո՞ւ այդ գողությունների փաստը աչքաթող են արել իրավապահները, պարզ չէ, գուցե չեն նկատել իրենց ավտոմեքենաների մուգ պատուհանների պատճառով:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

ՕՐԱԿԱՐԳ

## Այսօր

- **10.00-Երեւանի պետական լեզվաբանական համալսարանում, (Թումանյան 42, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկ, 2002 լսարան) տեղի կունենա ավագ դպրոցի օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստման դասընթացների բացման արարողությանը:**
- **12.30-«Փաստարկ» ակումբի հյուրը կլինի Թաթուլ Մանասերյանը:**
- **13.00-«Հայացք» ակումբում կհյուրընկալվի «Ժառանգության» պատգամավոր Ստեփան Սաֆարյանը:**
- **14.00-«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում Աժ առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովը կազմակերպում է խորհրդարանական լսումներ՝ Հայաստանում դեռահասների եւ երիտասարդների վերարտադրողական առողջության պահպանման հիմնախնդիրների վերաբերյալ:**
- **15.00-ՀՄՀ-Հայաստան գրասենյակում (Մելիք-Ադամյան 2/1) կկայանա ՀՄՀ-Հայաստանի շահառուների խորհրդի նիստը:**
- **15.00-Կենտրոն եւ Նորք-Մարաշի դատարանում (Տիգրան Մեծի 23/1) կլսվի Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցն ընդդեմ «Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի:**
- **17.00-Նկարիչների միությունում տեղի կունենա Արցախի նկարիչների խմբակային ցուցահանդեսի բացումը:**

# Ա. Կարապետյան. «Ընդդիմությունը հիմա ուղղակիորեն վերադասավորման խնդիր ունի»

**«Ուղղակիորեն Ադրբեջանն ու Թուրքիան, ներքին պայմանավորվածությամբ, մեզ ներքաշել են մի այնպիսի խաղի մեջ, որ իբր թե Ադրբեջանի եւ Թուրքիայի փոխհարաբերությունները վատն են եւ այդ փոխհարաբերությունների ծիրի մեջ, ինչպես կասեին, փորձել են առանձնացնել Արցախի եւ հայ-թուրքական սահմանի բացման հիմնախնդիրները: Ես դեռ կարող եմ ասել, որ շատ հետաքրքիր մի մարդ կա Ադրբեջանում, որը չի երեւում, բայց ռեալ քաղաքականությամբ զբաղվող մարդիկ գիտեն՝ Ռամիլ Մեհթիեւը, որը Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավարն է, ներքին կարգով բոլոր տեղի ակիմներին, մեր բառերով ասած՝ տեղի գուբերնատորներին, մարզպետներին, հրահանգել է, որ Թուրքիայի նկատմամբ պետք է վատ վերաբերմունք ցուցաբերվի», երեկ «Դե ֆակտո» ակումբում կարծիք հայտնեց ՆԺԿ նախագահ Արամ Կարապետյանը՝ խոսելով հայ-թուրքական հարաբերության հարցում Հայաստանի իշխանության քաղաքականության մասին: Վերջինիս խոսքերով՝ այդ խաղի հետեւում կանգնած են ԱՄՆ-ը եւ Իսրայելը:**

**Հայ ազգային կոնգրեսի ուրբաթ օրվա հանրահավաքում «Նոր ժամանակներ» կուսակցության առաջնորդը հայտարարել էր, թե ընդդիմության հաղթանակի համար հարկավոր է ժողովրդական նոր, խաղաղ ալիք, որի անունը կարելի է դնել անգամ հեղափոխություն:**

**Լրագրողներից մեկի այն հարցին, թե ո՞րն է ՆԺԿ առաջնորդի պատկերացմամբ Հայաստանում խաղաղ հեղափոխություն կատարելու միջոցը, Արամ Կարապետյանը նշեց. «Խաղաղ ճանապարհը այն է, երբ երեւում է, որ ժողովուրդը անկյունում կանգնած է եւ սկսում է բավականաչափ լուրջ փլուզվել բուրգը: Դա կիրառվել է Սերբիայում, դա կիրառվել է Ուկրաինայում՝ մի քիչ այլ ձեւով, դա հիմա կիրառվում է Վրաստանում՝ բավականաչափ էֆեկտիվ»:**

**Ըստ Արամ Կարապետյանի, հանրահավաքի ժամանակ իր ելույթի հիմնական շեշտը երկուսն էր:**




**«Առաջինը, ընտրություններից հետո իշխանությունն իրեն զգում է բավականաչափ ազատ: Եթե նկատել եք, 5:2 պարտվելու պարագայում Սերժ Սարգսյանը, Հայաստան-Թուրքիա երիտասարդական ֆուտբոլային խաղի ժամանակ ում հետ էր գտնվում, ինչպես էին այդ մարդիկ հագնված, պահում իրենց: Ուղղակիորեն կան քայլեր, որ հասարակության նկատմամբ ոնց որ թե իշխանությունը գրգռելու միտում ունենա: Բոլորը գիտեն, որ օլիգարխների մի մասը մասնակցել են ընտրակեղծիքների, կատարել են լուրջ գործողություններ ընտրական գործընթացների դեմ, այդ մարդիկ ուղղակիորեն բոլոր տեղերում նախագահի հետ երեւում են, հարսանիքներին իրար հետ պարում են, տժժացնում են, եւ այդ ամենը ցույց է տալիս, որ իշխանությունն ընդհանրապես թքած ունի հասարակության կարծիքի վրա», ասում է Արամ Կարապետյանը:**

**Նրա խոսքով, իշխանությունը համարում է, թե քանի որ ՀԱԿ-ին «ջարդել» են, ապա իրենք կարող են թե՛ ներսում, թե՛ դրսում իրենց զգալ ազատ. «Այնինչ ես կարծում եմ, որ ընդդիմությունը հիմա ուղղակիորեն վերադասավորման խնդիր ունի, այդ ամենից դասեր քաղելու խնդիր ունի: Եվ եթե հիշում եք, հաճախ են ասել, որ ընդդիմությունը կոտրված է, ժողովուրդը հիասթափված է: Հիշեցնում եմ ձեզ, 2003 թվականի ընտրություններից հետո էր այդպես, 2004-ի ապրիլյան ծեծուջարդից հետո էր այդպես»:**

**Արամ Կարապետյանին լրագրողները խնդրեցին կարծիք հայտնել ՀՅԴ-«Ժառանգություն»-ՀԱԿ համագործակցության առաջարկի մասին, որ արել էր «Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը:**

**«Դա ճիշտ է հարցնել հենց առաջարկողներին: Բայց ես մի բան գիտեմ, որ աշխարհում չի կարող լինել մտացածին միություն: Դա կարող է լինել PR, դա կարող է լինել վիրտուալ պրոյեկտ: Դաշնակցություն-ՀԱԿ, ազգային խնդիրների հետ կապված իրար հետ համագործակցություն, դառնալով դաշինքային միություն, մի քիչ ես վատ եմ դա պատկերացնում: Ես կարծում եմ՝ հայ քաղաքական դաշտում կան արմատական ընդդիմադիրներ եւ կան ընդդիմադիրներ ըստ կյանքի: Այսինքն, կյանքը ստիպում է՝ ընդդիմադիր են, կյանքը ստիպում է՝ դառնում են իշխանություն, եւ այսպես շարունակ: Կան ընդդիմադիրներ, որոնց համար ընդդիմադիր կեցվածքը բիզնես է: Այսինքն, ասում են մենք ընդդիմադիր կլինենք, կխոսենք այնքան, մինչեւ փողը կտաք եւ չենք խոսի», ասում է Արամ Կարապետյանը, նշելով, թե կյանքի բերումով ընդդիմադիր են «Օրինաց երկիրը», Դաշնակցությունը, իսկ բիզնես ընդդիմություն են, օրինակ, Դավիթ Հակոբյանն ու Արտաշես Գեղամյանը:**

**ՆԺԿ նախագահը հայտարարեց, որ փաստահավաք խումբը փակելով եւ համաներում նախապատրաստելով, իշխանությունը ցանկանում է փակել մարտի 1-ի էջը: Արամ Կարապետյանի խոսքով, համաներումն էլ լավ քայլ է, սակայն վատ է, որ նախագահը դա քաղաքական նպատակներից ելնելով փորձում է ներկայացնել իբրեւ հասարակության պահանջ:**

**Ն. Ս.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 6/15/2009 9:22 PM Page 1



# Հայաստանը՝ հետխորհրդային շրջանում Ռուսաստանի ամենավստահելի դաշնակից

Շահերն ու քաղաքական ինտրիգները ավելի հաճախ ապացուցում են, որ բարեկամները կարող են տարբեր ճամբարներում հայտնվել կամ կոնկրետ իրավիճակներում լինել ոչ դաշնակից, այլ՝ հակառակորդ: Միեւնույն ժամանակ, կան իրավիճակներ, երբ նորմալ հարաբերությունները ապահովում են նաեւ այլ գերակայությունների առկայություն:

Հայաստան-Ռուսաստան հարաբերություններն ում գրչի ու մտքի մեկնաբանությունների համար ասես, որ թեմա չեն դառնում, ընդ որում, որեւէ տեսակի մերձեցում, ասենք, ռուս-ադրբեջանական հարաբերություններում, միանգամից մեկնաբանվում է որպես վնաս հայ-ռուսական հարաբերություններին, մինչդեռ իրականությունը երբեք էլ այդքան միագույն չի լինում:

Հունիսի 14-ին Մոսկվայում տեղի ունեցավ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ երկրների նախագահների հանդիպումը, ստորագրվեց կարեւոր մի փաստաթղթային փաթեթ, որին չմասնակցեց Բելառուսը:

Ռուսական զանգվածային լրատվության միջոցների փոխանցմամբ, արդեն մոսկովյան հանդիպման կուլուարներում, ապա եւ ռուս փորձագետների կողմից կարծիքներ են հնչում, որ Բելառուսի նախագահի՝ ռուսական կողմի համար անակնկալ նիստին չմասնակցելը մեկ անգամ եւս եկավ վկայելու, որ Հայաստանը հետխորհրդային տարածաշրջանում մնում է Ռուսաստանի ամենավստահելի եւ ամենականխատեսելի դաշնակիցը: Եվ դա չնայած այն հանգամանքին, որ ԱՊՀ տարածաշրջանում վերջին տարիներին Ռուսաստանի Դաշնության դիրքերը նկատելի ամրապնդվում են:

Բելառուսի հետ հարաբերություններում թերեւս կարեւոր է ընդգծել Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի խոսքերով իսկ ձեւակերպված այն միտքը, որ երկու երկրներն իրենց երկկողմ հարաբերությունների խնդիրները տեղափոխում են ավելի բարձր մակարդակ, մինչդեռ, Մեդվեդեւի մեկնաբանությամբ, կարելի էր բարձրացնել ընկալուչն եւ ուղղակի զանգահարել՝ կարգավորելու «կաթնային» խնդիրը Ռուսաստանի եւ Բելառուսի միջեւ:




ՀԱՊԿ-ում Հայաստանի նախագահության շրջանն ավարտվեց, թեեւ չհանձնվեց հաջորդ նախագահողին՝ Բելառուսին, այլ մնաց Ռուսաստանի ժամանակավոր նախագահությամբ: Այնուամենայնիվ, Հայաստանի նախագահությունն աչքի ընկավ կազմակերպության գործունեության ակտիվացմամբ եւ նոր ու հեռանկարային նախաձեռնությունների առաջադրմամբ:

Այն, որ Հայաստանի նախագահության շրջանում ընդունվեց որոշում, ապա եւ ստորագրվեց պայմանագիր արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման վերաբերյալ (որով կազմակերպությունը որպես ռազմաքաղաքական դաշինք, միս ու արյուն ստացավ), արդեն իսկ խոսում է Հայաստանի նախագահության արդյունավետության մասին: Հավաքական ուժերի մասին խոսակցություններ կային նաեւ նախկինում, սակայն դրանք որեւէ կերպ չէին նյութականացվում, չէին դառնում որոշում:

Հայաստանին իր նախագահության շրջանում հաջողվեց նաեւ քայլեր ձեռնարկել տարբեր խնդիրների շուրջը ՀԱՊԿ անդամ պետությունների արտաքին քաղաքականության համակարգման ուղղությամբ: Մասնավորապես, Հայաստանի նախաձեռնությամբ ՀԱՊԿ անդամ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները միջազգային օրակարգի տարբեր հարցերի վերաբերյալ իրենց մոտեցումները համադրելու եւ համակարգելու ուղղությամբ հանդիպումներ ունեցան ինչպես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի, այնպես էլ ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների հելսինկյան հանդիպումից առաջ:

Այս կերպ հնարավոր կլինի տարբեր հարցերի առնչությամբ ավելի լայն շրջանակով հանդիպումներում հանդես գալ միասնական դիրքորոշումներով ու կոնկրետ մոտեցումներով:

Հայաստանին հաջողվեց նաեւ Մոսկվայում ստորագրված փաստաթղթերում ամրագրել այն դրույթը, որով սահմանվում է, որ արագ արձագանքման հավաքական ուժերի կիրառման որոշումները կայացվում են ինչպես անդամ երկրների կոնսենսուսային որոշմամբ, այնպես էլ այն կողմերի համաձայնությամբ, որոնք ստորագրել են եւ ում համար ուժի մեջ է մտել պայմանագիրը: Բարձր աստիճանի համաձայնության ապահովումը ուժային հարցերում հաստատապես ի նպաստ է կայունությանն ու անվտանգության երաշխավորվածությանը:

Ստորագրված փաստաթղթերում Հայաստանին հաջողվել է ամրագրել եւս մի կարեւոր դրույթ, համաձայն որի արագ արձագանքման հավաքական ուժերի կիրառման որոշումը կայացվում է անհետաձգելի ռեժիմով, ինչը կապահովի այդ ուժերի օպերատիվ եւ լիակատար պատրաստվածությունը՝ լուծելու իր առջեւ դրված խնդիրները:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# 5 կառուցապատողներ դիմել են պետական երաշխիքներից օգտվելու համար

*Նրանցից մեկն արդեն երաշխիք ստացել է*

**Հայաստանի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) այս տարվա առաջին ամիսներին արձանագրած անկումը էապես պայմանավորված է շինարարության տեմպերի նվազմամբ: Այս ճյուղը ՀՆԱ մոտ 25 տոկոս մասնաբաժին ունի, եւ բնական է, որ նրա տեմպերի կտրուկ նվազումը լուրջ ազդեցություն է ունենում ամբողջ տնտեսության վրա: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ, կառավարությունն այս տարվա ապրիլի 14-ին որոշում ընդունեց 20 մլրդ դրամի չափով պետական երաշխիքներ տրամադրել այն շինարարական ընկերություններին, որոնք ունեն կիսակառույց բազմաբնակարան շենքեր եւ դժվարանում են ավարտին հասցնել դրանց շինարարությունը:**

**Վարչապետի օգնական Դավիթ Հարությունյանը, որը կառավարության ստեղծած օպերատիվ շտաբի պատասխանատուներից է, այն կարծիքը հայտնեց, որ կառավարական այս նախաձեռնությունը կառուցապատողին երաշխիք է տալիս ավարտելու իր կիսակառույց շինությունը: Այսինքն, պետական երաշխիքների տրամադրման հիմնական նպատակն է նպաստել ժամանակավորապես դադարեցված շինարարության աշխուժացմանը:**

**Կառուցապատողները կարող են օգտվել այս ծրագրից սահմանված որոշակի չափանիշների բավարարելու դեպքում: Դրանցից առաջինն այն է, որ կիսակառույց շինությունը պետք է ունենա առնվազն 50 տոկոս ավարտվածություն: Սկզբնական տարբերակով այդ ցուցանիշը 75 տոկոս էր, բայց շինարարության վերաշխուժացմանն աջակցելու տրամաբանությունից ելնելով, օպերատիվ շտաբը որոշեց մեղմացնել այս պահանջը, որպեսզի մասնակցության աստիճանը ավելի մեծ լինի: «Իսկ ինչպե՞ս է որոշվում ավարտվածության ցուցանիշը», մեր հարցին ի պատասխան Դավիթ Հարությունյանը տեղեկացրեց, որ դա որոշում են կառավարության ներկայացրած 7 գնահատող կազմակերպություններից 2-ը: Վերջիններիս ընտրում է կառուցապատողը: Գնահատող կազմակերպությունները պետք է ներկայացնեն այդ կիսակառույց շենքի ավարտվածության գնահատականը եւ շուկայական արժեքը, քանի որ այդ կիսակառույցը պետք է գրավադրվի պետությանը:**

**Պետական վարկային երաշխիքների տրամադրման համար շինարարական կազմակերպություններից պահանջվող հաջորդ չափանիշը նրա համաձայնությունն է բանկի հետ, որ վերջինս պատրաստ է պետական երաշխիքի ներքո կառուցապատողին վարկ տրամադրել: «Կառավարությունը ոչ բոլոր ռիսկերն է վերցնում իր վրա եւ երաշխիքը տալիս է միայն մայր գումարի մասով: Տոկոսների ռիսկը բանկը պետք է վերցնի իր վրա», ասաց վարչապետի օգնականը, ավելացնելով, որ այս ամենը քննարկելուց հետո, օպերատիվ շտաբը կայացնում է պետական երաշխիքի տրամադրման որոշումը:**

**Վերոնշյալ որոշումը կայացնելիս հիմք է ընդունվում երկու գնահատող ընկերությունների հաշվարկած շուկայական արժեքներից նվազագույնը: Պետությունը երաշխիք է տալիս այդ արժեքի 35 տոկոսի չափով: Իսկ եթե կառուցապատողը չի կարողանում մարել այդ վարկը, ապա նրա կառուցած շինությունն անցնում է պետությանը: Այսինքն, շինության արժեքի 35 տոկոսով պետությունը գնում է այդ ամբողջ շինությունը: Դա վարկը չմարելու դեպքում իհարկե: Սակայն Դավիթ Հարությունյանն ընդգծեց, որ պետական երաշխիքների տրամադրման նման չափանիշների սահմանումը հենց արվում է, որ այդպիսի իրավիճակ չլինի:**

**Պետական երաշխիքների տրամադրման ներկա փուլի մասին խոսելով, վարչապետի օգնականը հայտնեց, որ ապրիլի 14-ից մինչ այժմ 7-10 կառուցապատող ընկերությունների հետ բանավոր քննարկվել են բոլոր մանրամասները: Իսկ կոնկրետ փաստաթղթային առաջարկներ են ներկայացրել 5 ընկերություն: Դրանցից մեկը՝ «Էլիս գրուպը», Երեւանի կենտրոնում, Զորավարի 40 հասցեում կառուցվող բազմագործառնական շենքի շինարարությունն ավարտին հասցնելու համար «Ամերիաբանկից» վարկային միջոցներ ներգրավելու նպատակով, կառավարության որոշմամբ առաջինը ստացավ 2,5 մլն դոլարի պետական երաշխիքը:**

**Մյուս առաջարկները դեռեւս քննարկման փուլում են: Դրանց ընդհանուր արժեքի վերաբերյալ մեր հարցին պատասխանելով, Դավիթ Հարությունյանը մոտավոր եւ նախնական ցուցանիշ նշեց՝ մոտ 4-4,5 մլրդ դրամը, որը կարող է վերանայվել հենց կառուցապատողների կողմից:**

**Փաստորեն, այս պահի դրությամբ պետության ընձեռած հնարավորությունից օգտվելու ցանկություն են հայտնել 5 շինարարական ընկերություններ, որոնց նախնական առաջարկների ընդհանուր արժեքը չի գերազանցում որպես պետական երաշխիք նախատեսված 20 մլրդ դրամ գումարի քառորդ մասը: Այսինքն, գործընթացը դեռ նոր է սկսվում եւ կառուցապատողների ակտիվությունը առայժմ այնքան էլ բարձր չէ:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերը՝ իրականություն

*1-ին էջից*

**Հանդիպման ավարտին Ռուսաստանի Դաշնության նախագահի հետ համատեղ մամուլի ասուլիսում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նշել է, որ ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծումն այն բոլոր գաղափարների նյութականացումն է, որոնք դրված են Հավաքական անվտանգության պայմանագրի հիմքում:**

**Ըստ Սերժ Սարգսյանի, հարկ է նշել երկու կարեւոր հանգամանք. «ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծումը եւ կառույցի անդամ-պետությունների արտաքին քաղաքական գործունեության առավել սերտ համակարգումը: Մեր արտաքին գործերի նախարարներն առաջին անգամ հավաքվեցին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանից եւ ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների հավաքից առաջ, ու կոնկրետ հարցերի նկատմամբ մշակեցին կոնկրետ մոտեցումներ: Այս երկու կարեւոր հանգամանքները խոսում են այն մասին, որ մեկ տարվա ընթացքում մենք էապես կարեւոր աշխատանք ենք կատարել»:**

**Հայաստանը կիրակի օրը ՀԱՊԿ-ում նախագահությունը պետք է փոխանցեր Բելառուսին, սակայն քանի որ Բելառուսի նախագահը Մոսկվա չէր ժամանել, նախագահությունը ժամանակավորապես ստանձնել է Ռուսաստանը:**

**Բելառուսի պատվիրակության բացակայությունը բացատրվում էր Ռուսաստան-Բելառուս «կաթնամթերքային» հարաբերությունների վատացմամբ: Ռուսաստանը էմբարգո է հայտարարել բելառուսական կաթնամթերքի համար, քանի որ այն չի համապատասխանում Ռուսաստանում ընդունված չափանիշներին:**

**Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն էլ ոչ միայն չէր մեկնել Մոսկվա, այլեւ հասուկ հայտարարություն էր տարածել, նշելով, թե հավաքական անվտանգություն չի կարելի կառուցել՝ առանց հաշվի առնելու անդամ պետության տնտեսական շահերը: Ավելին, ըստ Բելառուսի, որեւէ երկրի բացակայությամբ ստորագրված նյութերը ՀԱՊԿ փաստաթղթեր չեն:**

**Դմիտրի Մեդվեդեւի՝** Սերժ Սարգսյանի հետ համատեղ ասուլիսում հնչեցրած մեկնաբանությամբ, Բելառուսը չպետք է «կաթնային» խնդիրները խառնի ՀԱՊԿ գործողությունների հետ, հասկապես որ տնտեսական հարցերը երկու երկրների միջեւ կարող են լուծվել երկխոսությամբ: Ամեն դեպքում, Ռուսաստանի նախագահը համոզվածություն հայտնեց, թե Բելառուսը որոշ ժամանակ անց կմիանա համաձայնագրին ճիշտ այնպես, ինչպես կմիանա այդ համաձայնագիրը չստորագրած Ուզբեկստանը, որը «մտածելու հարցեր» ունի:

**Անկախ բոլոր գնահատականներից ու մեկնաբանություններից, փորձագետների կարծիքով, օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծումը եւ մասնակցությունը դրանում ավելի կուժեղացնի Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը:**

# Բենզինի շուկա՝ գերիշխող դիրքի չարաշահում չգործող ընկերության կողմի՞ց

Ինչպես տեղեկացանք տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից, երեկ տեղի ունեցած հանձնաժողովի արտահերթ նիստում որոշվել է վարույթ հարուցել բենզինի շուկայում: Հանձնաժողովի ուսումնասիրություններից պարզվել է, որ շուկայում գերիշխող դիրք ունեցող «Քաղպետրոլսերվիս» ընկերության կողմից իրացվող բենզինի գները բարձրացվել են եւս 20 դրամով: Դա վերջին մեկուկես ամսվա ընթացքում այս ընկերության կողմից բենզինի գները 20-ական դրամով բարձրացնելու երրորդ դեպքն է, ինչից «պրեմիում» տեսակի բենզինի գինը հասել է 370 դրամի, եւ հետագա թանկացումների սպասումներ են ստեղծվել:

Հանձնաժողովի հաղորդագրության մեջ նաեւ նշվում է, որ այս տարվա հունիսի 10-ին «Քաղպետրոլսերվիսը» հանձնաժողովին տեղեկացրել էր, որ ապրիլի 1-ից դադարեցրել է իր գործունեությունը, եւ որ բենզին ու դիզվառելիք է ներկրում նոր ընկերություն՝ «Սիթիպետրոլգրուպը»: «Այն դեպքում, երբ «Քաղպետրոլսերվիսը» կառավարության հայտարարած պետական գնումների այս տարվա երկրորդ եռամսյակի բենզինի մատակարարման մրցույթում հաղթող է ճանաչվել եւ շարունակել է իր գործունեությունը», ասվում է հանձնաժողովի տրամադրած տեղեկատվության մեջ:

Միաժամանակ, հանձնաժողովից տեղեկանում ենք, որ այս շուկայում մյուս գերիշխող դիրք ունեցող «Ֆլեշ» ընկերությունն իրացվող բենզինի գինն այսօր չի փոխել, իսկ մինչ այդ տեղի ունեցած թանկացումները, հանձնաժողովի մասնագետների նախնական գնահատմամբ, տեղավորվում են միջազգային շուկայի զարգացումների շրջանակում:

Ա. Մ.

AZG NEW 4.QXD 6/15/2009 9:20 PM Page 1



# Ջավախքում շարունակում է իշխել վախի, հալածանքի եւ որոշ պաշտոնյաների անպատժելիության մթնոլորտը

## *Հարցազրույց «Երկիր» միության խորհրդի նախագահ Սեւակ Արծրունու հետ*

***2009-ի ապրիլի 7-ին ջավախահայ քաղաքական ակտիվիստ Վահագն Չախալյանի նկատմամբ սահմանված դատավճռից անցել է շուրջ երկու ամիս: Այդ ընթացքում Ֆրանսիայի հայ համայնքը երկու ցույց է կազմակերպել ի պաշտպանություն Վահագն Չախալյանի, Շվեյցարիայի հայ համայնքի ներկայացուցիչները հանդիպել են երկրում Վրաստանի դեսպանի հետ, Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիա (FIDH) հեղինակավոր իրավապաշտպան կազմակերպությունը հանդես է եկել Վահագն Չախալյանի դատավարությունը դատապարտող հայտարարությամբ:***

**- Ինչպե՞ս են արձագանքում այս գործընթացներին վրացական իշխանությունները:**

- Վահագն Չախալյանի գործը ջավախահայության իրավունքների պաշտպանության խնդրի մի մասն է, քանի որ նա բանտում է իրավունքների պաշտպանությանն ուղղված իր գործունեության պատճառով: Իրավիճակը, սակայն, առավել ընդգրկուն կերպով գնահատելու համար փորձենք դիտարկել Վահագն Չախալյանի եւ ջավախահայության իրավունքների պաշտպանության գործընթացները առանձին-առանձին:

Վահագն Չախալյանի դատավճռից հետո այս երկու ամիսներին ֆիքսվել են մի շարք իրողություններ: Առաջինը. վրացական իշխանությունները, Չախալյանի նկատմամբ սահմանված խիստ պատժով՝ 10 տարի ազատազրկում, թերեւս, հույսեր էին փայփայում, որ ջավախահայ ակտիվիստը վհատվելու է, կորցնելու է պայքարելու իր վճռականությունը: Սակայն տեղի ունեցավ հակառակը: Վահագն Չախալյանին իր նկատմամբ ընդունված այդ անարդար դատավճիռն էլ ավելի ուժ եւ վճռականություն հաղորդեց: Նա մերժել է ստորագրել իրեն առաջարկված ներման խնդրագիրը, համբերությամբ դիմակայում է բանտում գործադրվող ճնշումներին:

Երկրորդը. ներկայումս հետեւողական աշխատանք է տարվում Վահագն Չախալյանի խնդիրը նաեւ վրացական ներքին հասարակական քննարկումների դաշտ տեղափոխելու համար: Չախալյանի գործում ընդգրկվել է նոր փաստաբան՝ Նինո Անդրիաշվիլին, որին Վահագնը խնդիր է տվել աշխատել տեղական՝ վրացական ԶԼՄ-ների, իրավապաշտպան կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կառույցների հետ իր նկատմամբ շինծու մեղադրանքների, գործի քննության ընթացքում արձանագրված խայտառակ իրավախախտումների ներկայացման ուղղությամբ:

Երրորդը. «Երկիր» միությունը շարունակում է հետեւողական աշխատանք տանել սփյուռքյան համայնքների եւ միջազգային իրավապաշտպան կառույցների հետ Վահագն Չախալյանի աջակցության ճակատը ընդլայնելու ուղղությամբ: Հուսով ենք, արդյունքները երկար սպասել չեն տալու:

Մի բան պետք է պարզ լինի. վրացական իշխանությունների՝ Չախալյանի գործում առերեւույթ անզիջում դիրքորոշումը արդյունք է ոչ թե նրանց ուժի, այլ՝ թուլության: Նրանք 2008-ի հուլիսի 21-ին Վահագն Չախալյանի ձերբակալման իրենց ընդունած սխալ որոշման պատանդն են: Փոխանակ շտկելու այդ որոշումը, վրացական իշխանությունները դրան գումարում են նորանոր սխալներ՝ գնալով ավելի ու ավելի խրվելով, խայտառակ եւ նորանոր հարվածներ ստանալով:

Սակայն այն, ինչ չի հաջողվում Վահագն Չախալյանի պարագայում, վրացական իշխանություններին, կարծես թե, հաջողվում է Ջավախքում: Այնտեղ այսօր շարունակում է իշխել վախի, հալածանքի եւ որոշ պաշտոնյաների անպատժելիության մթնոլորտը, որը տիրում էր անցած տարվա հուլիսին, երբ տեղի ունեցան հայտնի ձերբակալությունները: Վրացական իշխանությունները ջանք ու եռանդ չեն խնայում իրերի այս վիճակը պահպանելու համար:

**- Ինչո՞վ է, ըստ ձեզ, պայմանավորված վրացական իշխանությունների նման պահվածքը:**

- Դրա պատճառները բազմաթիվ են, սակայն պետք է առանձնացնել հիմնական երկուսը: Առաջինը, Սաակաշվիլու վարչակազմին թվում է, թե Հայաստանի ապրանքափոխանակության համար ճանապարհ տրամադրելու լծակը բավական է, որպեսզի հայությունը հրաժարվի Ջավախքի իր եղբայրների ճակատագրից: Սրանով, փաստորեն, Վրաստանի իշխանությունները մեր փոխարեն որոշում են մեր ազգային խնդիրների առաջնահերթությունը: Սա իրենց կողմից թյուրըմբռնում է: Հայությունն այլեւս ժողովրդագրական եւ տարածքային նահանջի հնարավորություն չունի:

Երկրորդ եւ թերեւս առավել կարեւոր պատճառն այն է, որ Վրաստանի իշխանությունները եւ հատուկ ծառայությունները մեծ դյուրությամբ կարողանում են խաղարկել ջավախահայության անմիաբանությունը՝ ընդհանուր նպատակի համար ընդհանուր ճակատով հանդես գալու եւ, կարեւորը, հետեւողական պայքար մղելու նրանց անկարողությունը: Սակայն ես լիահույս եմ, որ սա եւս ժամանակավոր երեւույթ է, որը ե՛ւս կշտկվի:

**- Բայց չե՞ք կարծում, որ Վրաստանի նման կեցվածքը ունի նաեւ աշխարհաքաղաքական հիմքեր:**

- Բացարձակապես՝ ոչ, դա առասպել է: Վրաստանն այսօր հայտնվել է աշխարհաքաղաքական ծանր վիճակում: Որպես իր անհեռատես քաղաքականության անմիջական արդյունք՝ Վրաստանը կորցրել է իր տարածքի որոշակի մասը: Ավելին, Վրաստանում ստեղծված աշխարհաքաղաքական ճեղքվածքը հետզհետե պառակտում է հասարակությանը, իսկ միջազգային հասարակական կարծիքը, որն ընդամենը մեկուկես-երկու տարի առաջ Վրաստանին ընկալում էր որպես տարածաշրջանում «ժողովրդավարության ջահակրի», այսօր հետզհետե ավելի բարձր է իր մտահոգությունն արտահայտում Սաակաշվիլու վարչակազմի՝ իշխանությունը պահելու տրամաբանությունից թելադրված ղեկավարման ավտորիտար ոճի եւ դրանից բխող մարդու իրավունքների աղաղակող խախտումների փաստերի առնչությամբ:

Վրաստանը միջազգային քաղաքական թատերաբեմում մեկուսացված է, հետզհետե կորցնում է աշխարհաքաղաքական գործչի իր դերը, վերածվելով աշխարհաքաղաքական գործիքի: Իշխանությանը կառչած վարչակազմն այլեւս ներքին ուժ չունի, նրան միայն մնում է տարբեր ուժերի կենտրոնների հլու-հնազանդ կամքը կատարելու միջոցով զսպել վրացական ընդդիմության եւ ժողովրդի ըմբոստությունը: Նման բարդ քաղաքական իրավիճակում հայտնված Վրաստանը որեւէ ռեսուրս չունի դիմակայելու իր արդար իրավունքների համար պայքարող ջավախահայությանը:

**- Արդեն բավականին երկար ժամանակ «Երկիր» միությունը ահազանգում է ջավախահայության խնդիրների մասին: Արդյոք դա բավարար ազդակ չէ՞ հայությանը նշված խնդրում համապատասխան կազմակերպվածություն ձեռք բերելու համար:**

- Միջազգային համապատասխան կառույցների հետ համագործակցությամբ եւ սփյուռքյան որոշ համայնքների օժանդակությամբ ընդամենը երեք տարում մեզ հաջողվեց ստեղծել մարդու եւ ազգային փոքրամասնությունների պաշտպանության միջազգային օրենսդրական դաշտին հարիր ջավախահայության դատի պաշտպանության համահայկական հայեցակարգի բոլոր բաղադրիչները: Սակայն, ջավախահայության իրավունքների գլխավոր կրողը, բնականաբար, հենց ջավախահայությունն է եւ իրեն ներկայացնող ու իր անունից խոսող քաղաքական կառույցը: Դժբախտաբար, նման կառույց այսօր գոյություն չունի: Դա, բնականաբար, չի կարող չթուլացնել այս խնդրի շուրջը ձեւավորվող համահայկական ճակատը:

Ուզում եմ հավատալ, որ ի վերջո կհաջողվի Ջավախքում եւ Հայաստանում ձեւավորել մի քաղաքական միավոր, որը ջավախահայության իրավունքների կրողը դառնալով կկարողանա Վրաստանի իշխանությունների, ինչպես նաեւ ամբողջ աշխարհի առջեւ հանդես գալ քաղաքական հստակ եւ միահամուռ դիրքորոշմամբ, արմատացած, կենտրոնացած մեկ նպատակի շուրջը, որն է՝ միջազգային նորմերին համապատասխան ջավախահայության լեզվակրթական, մշակութային, կրոնական, սոցիալ-տնտեսական եւ այլ իրավունքների իրականացումը:

Այնքան ժամանակ, որ ջավախահայությունն իր մեջ ուժ չի գտնի այս պայքարի շուրջը համախմբվելու, «Երկիր» միության կամ որեւէ այլ կազմակերպչական միավորի իրականացվող քայլերը լինելու են ոչ լիարժեք:

**- Շուտով Հայաստան է ժամանելու Վրաստանի նախագահը: Այդ առիթով անընդհատ շեշտվում է հայ-վրացական բարեկամության գաղափարը, որ ավելի շուտ կենացներ է հիշեցնում: Ինչքանո՞վ է այդ «բարեկամությունն» արտացոլված իրական քայլերում:**

- Հայաստանի եւ Վրաստանի աշխարհաքաղաքական շահերը կհամընկնեն, եթե Վրաստանը ցանկանա: Սաակաշվիլու թուրքամետ աշխարհաքաղաքական մոտեցումները, դժբախտաբար, հայ-վրացական հարաբերություններն ամփոփում են ճանապարհի շուրջն առեւտուր անելու հարաբերությունների շրջանակում: Այդ տեսանկյունից նայելով, ջավախահայության գոյության փաստն ինքնին վտանգ է ներկայացնում Վրաստանի շահերի համար, որովհետեւ ջավախահայության զբաղեցրած աշխարհագրական դիրքը պարունակում է ճանապարհ խնդրողի կարգավիճակից Հայաստանին ազատելու ներուժը:

Հարաբերությունների նման ձեւաչափը, կրկնում եմ, Վրաստանն է ստեղծել: Հայ-վրացական «բարեկամության» մասին ճառերը հիմնազուրկ ու դատարկ են, որովհետեւ Վրաստանը Հայաստանին վերաբերվում է ամենանյութապաշտ եւ շահագործող մոնոպոլիստի դիրքերից: Հայկական կողմը չի կարող դա քաջ չգիտակցել:

**- Ինչպե՞ս եք պատկերացնում ջավախահայության իրավունքների համար պայքարի ապագան:**

- Երրորդ հազարամյակում պետական սահմանները կորցրել եւ շարունակում են կորցնել իրենց երբեմնի նշանակությունը: Լինելով Վրաստանի քաղաքական տարածքում, սակայն բնակեցված հայերով եւ պատմականորեն հայկական բարձրավանդակի մաս կազմելով, Ջավախքը կմնա հայկական այնքան ժամանակ, ինչքան այնտեղ բնակվում է հայությունը:

Վրաստանը որպես ժամանակակից պետություն, ստիպված է հաշվի նստել այս փաստի հետ: Համոզված եմ, Ջավախքի ապագան կախված է ոչ թե Վրաստանի կամ Հայաստանի իշխանություններից, այլ հենց ջավախահայությունից:

Ջավախահայությունը հարկադրված է միավորվել իր իրավունքների համար պայքարում: Հատվածապաշտությունը, ծառայամոլությունը, պատեհապաշտությունը աններելի են: Հրամայականը պարզ է. Ջավախքի հասարակական-քաղաքական բոլոր գործիչները պետք է համախմբվեն եկեղեցու եւ հայերեն լեզվի կարգավիճակի, Ջավախքում հայկական համալսարանի ստեղծման եւ քաղաքական հալածանքների դադարեցման համար սկսված պայքարի շուրջը:

Վրացահայությունը հարկավոր են միջազգային օրենքներին գիտակից, արհեստավարժ, քաղաքական փորձի տեր առաջնորդներ, որոնք կարող կլինեն ամենուրեք՝ Ախալքալաքում, Թբիլիսիում, Երեւանում, Ստրասբուրգում եւ Վաշինգտոնում ներկայացնել եւ ապացուցել իրենց իրավունքների անշրջանցելիությունը: Ջավախահայության՝ իր իրավունքների համար պայքարի իրավատիրոջ ի հայտ գալու ժամանակն է:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հայ-սիրիական հարաբերությունները կարող են դառնալ ռազմավարական

*1-ին էջից*

Թեեւ Հայաստանի երկրորդ նախագահը՝ Ռոբերտ Քոչարյանը Սիրիայում չի եղել, իսկ ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանը Դամասկոս է այցելել պաշտպանության նախարար եղած ժամանակ, սակայն հետագայում եւս կողմերի հարաբերությունները դինամիկ զարգացում են ապրել: Ինչ վերաբերում է սիրիական կողմին, ապա 1960-ական թվականներից Սիրիայում իշխող Հաֆեզ Ասադը առաջին անգամ Հայաստան է այցելել 1979-ին եւ հանդիպել խորհրդային հանրապետության ղեկավարության հետ: Սակայն նորանկախ Հայաստանի պատմության մեջ Սիրիայի նոր նախագահի՝ Հաֆեզ Ասադի որդի Բաշար Ասադի սպասվող այցն աննախադեպ է: Նկատենք սակայն, որ 2000-ից այդ երկրում իշխող Բաշար Ասադի ժամանակաշրջանում հայ-սիրիական հարաբերություններում որոշակի տարաբնույթ փոփոխություններ նկատվեցին: Մասնավորապես՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունը Հայաստանում չունի արտակարգ եւ լիազոր դեսպան եւ այստեղ գործուղվել են միայն հավատարմատարներ: Ի պատասխան այս քայլի, պաշտոնական Երեւանը եւս 2004-ից Սիրիայից հետ կանչեց դեսպանին՝ Լեւոն Սարգսյանին, որից հետո՝ մինչեւ 2007-ի աշունը, այսինքն՝ Արշակ Փոլադյանի նշանակումը, մեր երկիրը փաստորեն նույնպես Դամասկոսում չուներ արտակարգ եւ լիազոր դեսպանի կարգավիճակի դիվանագետ: Նկատենք, որ նմանատիպ քայլ պաշտոնական Դամասկոսը կատարել էր դեռ 2002-ից, երբ Հայաստանից հետ կանչվեց դեսպան Համիդ Հասանին, դրանից հետո մինչ օրս Հայաստանում Սիրիան ներկայացված է միայն հավատարմատարի մակարդակով: 2006-ից Սիրիան Հայաստանի քաղաքացիների համար սահմանեց վիզային ռեժիմ: Նկատենք, որ նման կարգ արդեն Սիրիայի քաղաքացիների համար ավելի վաղ հաստատել էր պաշտոնական Երեւանը: Սակայն մեր երկրի այս քայլը պայմանավորված էր ՀԱՊԿ-ի շրջանակներում կնքված անվտանգության խնդիրներին առնչվող մի շարք պայմանագրերով եւ ուղղված չէր ոչ մի պետության, առավել եւս Սիրիայի դեմ: Այնուամենայնիվ, հարաբերությունների սառնության այս ժամանակաշրջանի ավարտն առաջինը ազդարարեց պաշտոնական Երեւանը, երբ Դամասկոսում նշանակվեց արտակարգ եւ լիազոր դեսպան՝ Արշակ Փոլադյանը: Իսկ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի այցը, կարող ենք հուսալ, նոր էջ կբացի հայ-սիրիական հարաբերություններում:

Գաղտնիք չէ, որ Սիրիայի Արաբական Հանրապետությունը Մերձավոր Արեւելքի կարեւորագույն երկրներից է, որը մեծ ազդեցություն ունի ոչ միայն այդ տարածաշրջանում, այլեւ ողջ արաբական եւ իսլամական աշխարհում, հետեւաբար Դամասկոսի հետ ամենաբարձր մակարդակով հարաբերությունների զարգացումը վստահաբար նպաստավոր են Հայաստանի համար: Առավել եւս, որ դրա համար կան ոչ միայն քաղաքական եւ տնտեսական շահերի համընկնում ու Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում, Հալեպում ու մի շարք այլ քաղաքներում գործող հզոր հայկական համայնք, այլեւ պատմական անցյալի ընդհանրություն, ինչը երկու ժողովուրդներին մոտեցնում ու հասկանալի է դարձնում միմյանց: Կարող ենք պնդել, որ հայ-սիրիական հարաբերություններում չկա եւ ոչ մի կնճռոտ հարց, որը հնարավոր չլինի լուծել համատեղ բանակցությունների ընթացքում: Հետեւաբար ժամանակն է, որ հայ-սիրիական հարաբերությունները գործընկերային-բարիդրացիականից վերածվեն ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների: Երկու երկրները միաժամանակ կարիք ունեն միմյանց եւ շատ հարցերում միասնաբար գործելու դեպքում կարող են լուրջ դերակատարություն ստանձնել Մեծ Մերձավոր Արեւելք կոչվող տարածաշրջանում:

AZG NEW 5.QXD 6/15/2009 9:21 PM Page 1



ԱԴՐԲԵՋԱՆ-ԻՍՐԱՅԵԼ

# Հարաբերությունների նոր փուլ

***«Ջերուսալեմ փոստ» թերթի հունիսի 1-ի համարից ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածում անկախ գիտաշխատող Ալեքսանդր Մուրինսոնը քննարկում է ադրբեջանա-իսրայելական հարաբերությունների ակտիվացման նոր փուլը: Մուրինսոնի «Թուրքիայի բարեկամական հարաբերությունները Իսրայելի եւ Ադրբեջանի հետ: Պետական ինքնությունն ու անվտանգությունը Մերձավոր Արեւելքում եւ Կովկասում» վերնագրով գիրքը «Ռութլեջ» հրատարակչատունը հրատարակելու է այս տարվա սեպտեմբերին:***

Իսրայելը մեծ ջանասիրությամբ փորձում է բարեկամական սերտ հարաբերություններ հաստատել Ադրբեջանի եւ հետխորհրդային տարածքի մյուս մահմեդական պետությունների, օրինակ, Ղազախստանի հետ: Մայիսի 6-ին Պրահայում Իլհամ Ալիեւի եւ Իսրայելի նորանշանակ արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը Բաքու այցելի հունիսի վերջերին, դեպի ԱՊՀ-ի մահմեդական երկրներ իր ուղեւորությունների շրջանակներում: Բաքվում «ամենաբարձր մակարդակի ընդունելություն» է նախապատրաստվում:

Հաշվի առնելով իրանյան վարչակազմի (որ միջուկային զենքին տիրանալով սպառնալիք է առաջացնում) եւ Իսրայելի միջեւ ստեղծված լարվածությունը, այս այցելությունը փաստորեն վերահաստատում է երկու երկրների (Ադրբեջանի եւ Իսրայելի) միջեւ գոյություն ունեցող ռազմավարական համագործակցությունը: Դիվանագիտական հարաբերություններ հաստատվել էին 1992-ին Ադրբեջանի անկախությունից անմիջապես հետո: 1997-ին վարչապետ Բենջամին Նաթանյահուն աշխատանքային այցով Բաքու էր ժամանել Չինաստանից վերադարձին:

Դիվանագիտական նոր փուլ նախաձեռնողը Լիբերմանն է, որ Մոլդովայից է արտագաղթել Իսրայել եւ որպես ռազմավարական գործերի նախարար 2006-2008 թվերից որդեգրել է Արեւելյան Եվրոպայի, Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի նորանկախ երկրների հետ հարաբերությունները սերտացնելու քաղաքականությունը: Նա հատուկ ուշադրություն է դարձնում Ադրբեջանին որպես Կասպից ծովում մարտավարական դիրք ունեցող երկրի: Նա Ադրբեջան է այցելել 2007-ի օգոստոսին: Սերտ հարաբերությունների հիմնաքարը, անշուշտ, էներգիայի մատակարարման անվտանգությունն ու ապահովումն է:

Ներկայումս Ադրբեջանը մատակարարում է իսրայելական նավթի 20 տոկոսը: 2008-ին այդ ներմուծումները հասել են 3,5 միլիարդ դոլարի: Ծրագրվում է նաեւ բնական գազ հասցնել Հայֆա՝ Թուրքիայի տարածքով: Բայց կա նաեւ երկկողմ հետաքրքրություն եւ պատրաստակամություն՝ ընդարձակելու համագործակցությունն ու ընդգրկելու նաեւ գյուղատնտեսության, բժշկական հետազոտությունների եւ տեխնոլոգիայի բնագավառները: Այդ աշխատանքներում բավական մեծ ջանքեր է գործադրել Ադրբեջանում Իսրայելի դեսպան Արթուր Լենքը, որը 2005-ից գտնվում է Բաքվում եւ ավարտում է պաշտոնավարությունը հուլիսին:

Հիշեցման կարգով պետք է նշենք, որ 2008-ի մայիսին Բաքվում տեղի ունեցավ իսրայելա-ադրբեջանական գործարարների ֆորումը, որին մասնակցեց Իսրայելի գյուղատնտեսության նախարար Շալոմ Սիմհոնը: Այս տարվա մայիսի 18-ին Թել Ավիվում կայացած ֆորումին մասնակցեցին Ադրբեջանից ավելի քան 20 ընկերություններ եւ տնտեսական զարգացման նախարարության պաշտոնյաներ: Ֆորումի գլխավոր հաջողությունը համագործակցության պայմանագրի ստորագրումն էր Իսրայելի Արտահանման ինստիտուտի եւ Ադրբեջանի Արտահանման եւ ներդրումների խրախուսման հիմնադրամի («Ազպրոմո») միջեւ: Սա փոխադարձ առեւտրական գործունեություն ծավալելու եւ ներդրումներ կատարելու պայմանագիր էր, որի շրջանակներում 2009-ին Իսրայելում կայանալիք միջազգային գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու է ադրբեջանական պատվիրակությունը գյուղատնտեսության փոխնախարար Իլհամ Գուլիեւի գլխավորությամբ:

Ադրբեջանը 2008-ի սեպտեմբերի վերջերին համաձայնեց ռազմական ծանր հրանոթներ գնել Իսրայելից, տրամադրելով դրա համար հարյուրավոր միլիոնների հասնող դոլարներ: Դա առաջին հրապարակային խոստովանությունն էր հետզհետե աճող ռազմավարական հարաբերությունների, որոնք շատ վաղուց էին սկսվել՝ Ադրբեջանի անկախության առաջին տարիներից:

Սերտ, բարեկամական հարաբերություններ հաստատելու Իսրայելի մոտեցումը պայմանավորված էր տարածքների մոտիկությամբ: Կայունությունը Կովկասում լրջորեն անդրադառնալու էր Մերձավոր Արեւելքի կայունության վրա, իսկ Ադրբեջանի եւ Կենտրոնական Ասիայի մահմեդական ազգաբնակչությունը կարող էր իր դերակատարությունն ունենալ այդ գործում: Կասպիական տարածքը նաեւ պարարտ հող կարող էր դառնալ ծայրահեղական մահմեդականության եւ միջուկային սպառազինությունների տարածման համար, այնպես որ անհրաժեշտ էր այդ երկրների էլիտար եւ աշխարհիկ խավերի հետ զարգացնել հարաբերությունները: Կար նաեւ, անշուշտ, տարածաշրջանի ընդերքի հարստության գործոնը, որն այդ համագործակցությունը դարձնում էր առավել գրավիչ:

Օբամայի վարչակազմը հավանաբար ճիշտ կվարվի եւ կօգտագործի Նաթանյահուի կառավարությանը որպես միջնորդի իր եվրասիական եւ հարավկովկասյան ռազմավարական քաղաքականության շրջանակներում: Ակնկալվում է, որ Լիբերմանի օրոք Իսրայելի ազդեցությունը նախկին խորհրդային հանրապետությունների, եւ ինչու չէ, նաեւ Ռուսաստանի Դաշնության վրա, գնալով աճելու է: Լիբերմանը՝ ժամանակին որպես ռազմավարական գործերի նախարար կարողացել էր այդ հանրապետություններում պաշտոնական եւ ոչ պաշտոնական ծանոթությունների իսկայական համացանց կառուցել:

Պերեսի Ադրբեջան այցելությունն արդեն իսկ մտահոգություն է առաջացրել Իրանում: Մայիսի 21-ին ադրբեջանական լրատվամիջոցները հայտարարել էին, որ Իրանի կառավարության աշխատակազմի ղեկավար Հասան Ֆիրուզաբադին սպառնացել է Ադրբեջանին, ասելով որ Իսրայելի նախագահի այցելությունը «սխալ քայլ» կլիներ: «Շիմոն Պերեսի այցելությունը բարեկամական քայլ չի կարող համարվել Իրանի հետ Ադրբեջանի հարաբերություններում», ավելացրել էր նա:

**Թարգմ. Հ. Ծ.**

ԼԻԲԱՆԱՆ

# Մինչ բանակցությունները շարունակվում են նոր կառավարության կազմության համար

## *Հաղթանակած «Մարտ 14»-ի ուժերի հայ երեսփոխանների պատվին փառաշուք ընդունելություն Բեյրութի Վ. Թեքեյան կենտրոնում*

**Արդեն մի քանի օր է, ինչ տոնախմբությունների թե փոխադարձ ընտրախախտումների վերաբերյալ ամբաստանությունների մթնոլորտում շարունակվում են բանակցությունները Լիբանանի նոր կառավարության կազմության համար: Ըստ ներկա վարչապետ Ֆուադ Սինիորայի, խորհրդարանական ընտրություններում հաղթանակած « Մարտ 14» խմբակցության ղեկավար Սաադ Հարիրիին է իրավունք վերապահված դառնալու նոր վարչապետ: Առայժմ ընդդիմադիրները, բացառությամբ գեներալ Միշել Աունի, չափավոր դիրքորոշմամբ համաձայն են միասնական կառավարություն կազմելու ծրագրին՝ դիմագրավելու համար երկրի տնտեսական ու քաղաքական բարդ հարցերը: Լիբանանի ժողովուրդը հոգնել է անվերջ պատերազմներից, քաղաքական անկայուն իրավիճակից, անընդհատ թանկացող կենցաղային պայմաններից, ցանկանալով խաղաղ եւ ստեղծագործ կյանք:**

**Մինչ այդ, մասնակցությամբ ու կազմակերպությամբ ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչության, հունիսի 11-ին Բեյրութի Վահան Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ փառաշուք շնորհավորական ընդունելություն՝ ի պատիվ «Մարտ 14»-ի ընտրացանկով հաղթանակած երեսփոխաններ՝ Ժան Օղասափյանի (ՌԱԿ), Շանթ Չինչինյանի (անկախ), Սեպուհ Գալփաքյանի (ՍԴՀԿ), Սերժ Թուրսարգիսյանի (ՍԴՀԿ): Հարյուրավոր համակիրներ, գաղափարակիցներ, կուսակցականներ՝ հյուրընկալության ջերմ մթնոլորտում՝ շնորհավորեցին լիբանանահայ գաղթօջախի այս ընտրյալներին: Բուռն ծափողջույնների տակ՝ Լիբանանի խորհրդարանի նորընտիրները իրենց երկարամյա ծառայությունը ավարտած երեսփոխաններ Հակոբ Գասարճյանի (ՌԱԿ) ու Եղիա Ջերեջյանի (ՍԴՀԿ) հետ լուսանկարվեցին Լիբանանի Նահատակաց հրապարակի, Լիբանանի ու Հայաստանի դրոշների ֆոնին:**

**Նույն օրը Լիբանանի խորհրդարանում Հակոբ Բագրատունուն եւ Արթուր Նազարյանին որպես «հայկական բլոկ»-ի ներկայացուցիչների ունեցող ՀՅ Դաշնակցությունը նույնպես կազմակերպեց հեղափոխական երգերի համերգ՝ հայաշատ Բուրջ Համուդ թաղամասում:**

**Նախորդ օրը՝ հունիսի 12-ին, ՌԱ կուսակցության Լիբանանի շրջանային վարչությունը՝ մեծ ճաշկերույթ էր կազմակերպել ի պատիվ ընտրական մարմնի, ընտրազանգվածի ներկայացուցիչների ու «Մարտ 14»-ի դաշնակից ուժերի: Երեկոյան ժամը 8:30-ից սկսյալ, հարյուրավոր հրավիրյալներ տեղ էին գրավել Բեյրութի Վահան Թեքեյան կենտրոնի «Հրաչյա Սեդրակյան» դահլիճում: Քիչ ետք, որոտընդոստ ծափողջյուններով ներկաները դիմավորեցին ՌԱԿ Լիբանանի նորընտիր պետական երեսփոխան Ժան Օղասափյանին, ռամկավար ընտանիքում ծնված ու դաստիարակված, խորհրդարանական ընտրությունների «մեծ անակնկալ» Շանթ Չինչինյանին, 9-ամյա խորհրդարանական առաքելությունը ավարտած Հակոբ Գասարճյանին, «Ազատ հայեր»-ի ղեկավար զորավար Նարեկ Աբրահամյանին, ՍԴ հնչակյան կուսակցության եւ «Մարտ 14»-ի ուժերի ներկայացուցիչներին:**

**Մի քանի ժամ տեւած ուրախ մթնոլորտում ելույթ ունեցան այս պատմական ընտրություններում հաղթանակած երեսփոխաններ Ժան Օղասափյանը, Շանթ Չինչինյանը, հրաժեշտի խոսքով՝ Հակոբ Գասարճյանը: Տեղի ունեցավ հրավառություն: Իսկապես ազգային զարթոնքի ու հայրենասիրության վառ դրսեւորումների օրեր են լիբանանահայության համար:**

**ՀԱՄՈ ՄՈՍԿՈՖՅԱՆ**
**Բեյրութ**

# Ջորջ Օբաման հուշագիրք կհրապարակի ԱՄՆ-ում



**Նախագահ Բարաք Օբամայի խորթ եղբայր Ջորջ Օբաման հուշերի գիրք է հրապարակելու, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Ջորջը Քենիայում Բարաք Օբամայի բազմաթիվ հարազատներից մեկն է: Նա պայմանագիր է կնքել Նյու Յորքի Simon & Schuster հրատարակչության հետ:**

**Ջորջ Օբաման հայտնի է նրանով, որ դատված է եղել թմրանյութեր պահելու համար: Հրատարակիչները նրա պատմությունը համարում են «հուզիչ»:**

**2009-ի սկզբներին 27-ամյա Ջորջ Օբաման մեղադրվել էր թմրանյութ պահելու եւ ձերբակալվելիս դիմադրություն ցույց տալու մեջ: Բայց հետո մեղադրանքները հանվել էին: «Հայրենիք» պայմանական անունը կրող գրքում Ջորջը պատմում է, թե ինքն ինչպես է ծանոթացել հանցագործությունների եւ չքավորության աշխարհին, իսկ հետո հասարակական աշխատանք կատարել եւ օգնել կարիքավորներին: Գիրքը լույս կտեսնի լրագրող Դեմիեն Լյուիսի համահեղինակությամբ:**

**«Եթե Ջորջ Օբաման մեր նախագահի խորթ եղբայրն էլ չլիներ, նրա պատմությունը կլիներ հուզիչ եւ ոգեշնչող», հայտարարել է հրատարակչության գործադիր փոխնախագահ Դեւիդ Ռոզենթալը:**

**Պայմանագրի մանրամասնությունները չեն հրապարակվում, սակայն լավատեղյակ աղբյուրներից մեկը հաղորդում է, որ Ջորջ Օբամայի հոնորարի գումարը վեցանիշ թիվ է:**

**Ջորջը Բարաք Օբամայի հոր՝ Բարաք Օբամա ավագի յոթ զավակների մեջ ամենակրտսերն է: Հուշեր գրում են նախագահի նաեւ ուրիշ հարազատներ, մասնավորապես նրա խորթ քույր Մայա Սոետորո-Նգը:**

# Նաթանյահուն ընդունեց պետություն ստեղծելու պաղեստինցիների իրավունքը

## *Սակայն կան նախապայմաններ*



Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն իր պաշտոնավարման ընթացքում առաջին անգամ ընդունել է անկախ պետություն ստեղծելու պաղեստինցիների իրավունքը: Փոխարենը նա պահանջել է լիակատար զինաթափում, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Վարչապետը նաեւ պահանջել է, որ պաղեստինցիները Իսրայելը ճանաչեն որպես հրեական պետություն: Ավելի վաղ պաղեստինյան կողմի ներկայացուցիչները քանիցս պատրաստակամություն էին հայտնել Իսրայելը ճանաչելու 1967-ի սահմաններում՝ առանց Գազայի հատվածի եւ Այսրհորդանանի, սակայն իսրայելական կողմն ամեն անգամ մերժել էր այդ պայմանը:

Մայիսին ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ զրույցի ժամանակ Նաթանյահուն պարտավորվել էր հնարավորինս շուտ պաղեստինցիների հետ սկսել բանակցություններ, որոնց նպատակներից մեկը պետք է դառնար պետություն ստեղծելու պաղեստինցիների իրավունքի ճանաչումը:

Նաթանյահուի վերջին ելույթի արձագանքները չեն ուշացել: Պաղեստինյան «Համաս» արմատական շարժման ներկայացուցիչը քննադատել է հրեա վարչապետի ելույթը, ասելով, որ այն «արտացոլում է վարչապետի ռասիստական եւ ծայրահեղական գաղափարախոսությունը»:

Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի պաշտոնական ներկայացուցիչը եւս բացասաբար է գնահատել Նաթանյահուի ելույթը: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է պաղեստինցի գործչի այն խոսքերը, որ պաղեստինցիների զինաթափմանը վերաբերող նրա պահանջը «չի հանգեցնի լիարժեք եւ արդարացի հաշտության»:

Մինչդեռ Սպիտակ տան մամլո քարտուղար Ռոբերտ Գեյթսը ԱՄՆ վարչակազմի դրական վերաբերմունքն է արտահայտել Նաթանյահուի ելույթի առթիվ, այն համարելով «կարեւոր քայլ»:

# Ամերիկացիները պատրաստ են «Մանասը» թողնել մինչեւ օգոստոսի 18-ը

**Ղրղզստանի «Մանաս» ռազմակայանում գտնվող ամերիկացի զինծառայողները պատրաստ են հանրապետությունից հեռանալ մինչեւ օգոստոսի 18-ը: Այդ մասին լրագրողներին հայտարարել է նախկին հրամանատար, գնդապետ Քրիստոֆեր Բենսը:**

**Ինտերֆաքսը հաղորդում է, որ հունիսի 15-ին ռազմակայանում տեղի է ունեցել հրամանատարության ամենամյա փոփոխություն: Բենսի խոսքերով, «Մանասից» արդեն սկսել են ուղարկել «սարքավորումներ»:**

**«Վերջին մեկ տարում ռազմակայանը Ղրղզստանի տնտեսության մեջ ներդրել է 60 մլն դոլար: Եվս 50 մլն կներդնենք, եթե ռազմակայանում մեր հետագա ներկայությունը թույլատրող համաձայնագիր ստորագրվի», հայտարարել է Բենսը:**

AZG NEW 6.QXD 6/15/2009 9:22 PM Page 1





# Գիրք Վարդուհի Վարդերեսյանի անհատականության մասին

## «Ժողովրդի համար, ժողովրդի հետ, ժողովրդի սիրով»

«Պատանեկան տարիների ամենասիրելի կերպարը Ջոնին էր: Նրանով ապրում էի, սակայն չէի կարողանում պատկերացնել, որ կերպարը մարմնավորում է երկու անգամ մայրացած արդեն երեսունն անց կին: Ո՞վ կարող է չսիրել Մարգարիտի անմեղությունը, բարությունը: Վարդուհի Վարդերեսյան դերասանուհին ինձ համար զուգակցվում է գեղեցկության, կանացիության ու կենսախնդության հետ», պատմում է լրագրող, գրող **Գայանե Աթանեսյանը:**

Սիրելի դերասանուհու հետ առաջին հանդիպումը 90-ականների խավար եւ ցուրտ տարիներին էր: «Մեծ դժվարությամբ կարողացա համոզել Վարդուհի Վարդերեսյանին հարցազրույց տալ: Զրույցն ընթացավ շատ անկեղծ, ջերմ ու անկաշկանդ մթնոլորտում: Հարցազրույցի վերջում տիկին Վարդուհին էլ զարմացավ՝ հավելելով. «Այս ի՞նչ անկեղծացա», **«Ազգ»-ի** հետ առանձնազրույցում պատմում է Գայանե Աթանեսյանը:

Հոդված-ակնարկն արժանացավ դերասանուհու հավանությանը, ինչից հետո լրագրողի հետ հանդիպումները դարձան հաճախակի:

«Տարիների ընթացքում ծավալված զրույցները բազմաշերտ էին: Նրանցից շատերը տպագրվել են բազմաթիվ թերթերում, սակայն ասելիքը, բովանդակությունը այնքան շատ էր, որ անհնար էր տեղավորել մի քանի հարցազրույցում: Այսպես սկսեցի գրառումներ կատարել: Վիկտոր Ռոգովը հրաշալի միտք ունի. «Ներկայացման ծրագրում Վարդուհի Վարդերեսյան անունը կարդալիս սպասում ես, թե այս անգամ նա ինչով կզարմացնի իր հանդիսատեսին»: Վարդերեսյանն ինձ անընդհատ զարմացնում է: Նրա բնավորությունը բարդ է, ինչպես ասել է Թումանյանը՝ աչքի նման պարզ, աչքի նման բարդ: Թվում է նրան ճանաչում եմ, սակայն գալիս է մի պահ եւ




հանկարծ այնպիսի խոսք կամ այնպիսի արարք կկատարի, որն անսպասելի էր», նկատում է Աթանեսյանը:

Վարդերեսյանի բացատրությունն էլ հետեւյալն է. «Մի՛ մոռացիր, որ հազարավոր կերպարներ եմ խաղացել: Եվ որքան էլ փորձենք նրանցից հեռանալ, այնուամենայնիվ դրանք մեզ վրա ազդեցություն ունենում են»:

Գայանե Աթանեսյանի «Ժողովրդի համար, ժողովրդի հետ, ժողովրդի սիրով» գիրքը տասնհինգ տարվա ընկերության, շփումների ու անկեղծ զրույցների արդյունքն է: Փոքրիկ գրքույկում ներկայացված է Վարդերեսյանի բեմական ողջ գործունեությունը, դերերը, երազանքները:

Երեկ Ազգային գրադարանում տեղի ունեցավ գրքի շնորհանդեսը:

«Այս գիրքը յուրօրինակ է, գրքում կան հանդիպումները ժողովրդի հետ: Գայանեն կազմակերպում էր հանդիպումներ, ունեցել ենք ծանոթություններ տարբեր մարդկանց հետ ու նրանց կարծիքներն ու տպավորությունները ներկայացված են գրքում: Գողտրիկ, այժմեական ստեղծագործություն է: Ծավալային փոքրությունն իրեն չի արժեքազրկում: Հաճելի է այդ փոքրիկ ստեղծագործությունը ձեռքում պահել: Գիրքն էլ մարդու նման պետք է հմայիչ լինի», նկատեց **Վարդուհի Վարդերեսյանը**:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Հ.Գ. Չափազանց դժվար եղավ համոզել Վարդուհի Վարդերեսյանին հավաքված սակավաթիվ լրագրողներին ներկայացնել իր տպավորությունները: Զրուցեց «միայն Գայանեի խաթր»: Տիկին Վարդուհին անդրադարձավ նաեւ* ***«Ազգ»*** *օրաթերթին, դժգոհելով, որ երբեւէ իրեն չենք հիշում եւ լուսաբանում: Պետք է նկատենք, որ սիրելի դերասանուհին, թերեւս* ***«Ազգ»*** *այնքան էլ հաճախ չի կարդում, այլապես կնկատեր, իր դերերի եւ ներկայացումների մասին բազմաթիվ հրապարակումները: Դրանցից մեկն էլ Գայանե Աթանեսյանը մեջբերել է գրքում(էջ 67):*

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՅԳՈՒՄ

# Հարգանքի տուրք Հենրիկ Իգիթյանի հիշատակին

**Երեկ Ազգային ժողովի դարպասները կրկին բացվել էին: Այս անգամ առիթը «Մանկական էսթետիկական գեղագիտական հանրապետական կենտրոնի» սաների 60 գեղանկարների եւ 20 քանդակների բացօթյա ցուցադրված 4-16 տարեկան երեխաների աշխատանքների ցուցահանդեսն էր, որը դիտելու էին եկել նաեւ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ԱԺ հանձնաժողովների նախագահները, պատգամավորներ, ՀՀ մշակույթի նախարարը եւ շատ ուրիշ արվեստագետներ, հյուրեր: Պրն Աբրահամյանը շրջելով, ցուցադրությունների մասին մանրամասն բացատրություն էր ստանում տկն Իգիթյանից ու նաեւ հետաքրքրվում կենտրոնի ընթացիկ գործունեությամբ: ԱԺ նախագահն իր գոհունակությունը հայտնեց նման կարեւոր դաստիարակչական մոտեցման համար կենտրոնի ողջ անձնակազմին: Իսկ լրագրողների հարցերին ի պատասխան նշեց. «Նման միջոցառումով մենք նաեւ ոգեկոչում ենք Հենրիկ Իգիթյանի հիշատակը եւ փորձում ենք ցույց տալ, թե Իգիթյանը ինչ ներդրում ունի Հայաստանի արվեստի բնագավառում: Ինչպես տեսնում եք, արդեն ավանդույթ է դարձել ԱԺ-ի պարտեզում նման միջոցառումների կազմակերպումը եւ մենք այսուհետեւ առիթը բաց չենք թողնի մեր դռները բացելու հասարակության, երեխաների եւ բոլորի առջեւ: Մենք պետք է փորձենք ակտիվացնել շփումը հասարակության ու ԱԺ-ի հետ, որը բազմակարծության ամբիոն է եւ պետք է ծառայի քննադատությունների, ողջամիտ քննարկումների, կոչերի համար եւ պատրաստ ենք յուրաքանչյուր քաղաքական ուժի հետ քննարկել յուրաքանչյուր հարց, որը կվերաբերի մեր երկրի, պետության զարգացմանը»:**






**ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը գնահատեց այն երեւույթը, որ արդեն ավանդույթ է ձեւավորվում ու Ազգային ժողովի երկաթե դարպասները բացվում են հասարակության ու երեխաների առջեւ ներկայացնելու իրենց գեղագիտական ամփոփ աշխարհը՝ հատկապես Հենրիկ Իգիթյանի կենտրոնի սաների աշխատանքներով: «Այսօր մենք ներկայացնում ենք մեր ազգային արվեստի հպարտություններից մեկի սաների աշխատանքները ու չենք կարող չհիշատակել Հենրիկ Իգիթյանին, մի մարդու, որը իսկապես իր ամբողջ կյանքը նվիրեց երեխաներին եւ այսօր դրա վառ ապացույցն ու արդյունքը ցուցադրված է, իհարկե մասամբ, այս հրաշալի պուրակում: Այս պահին մենք արդեն խոսեցինք մի անավարտ գործի մասին՝ Սարդարապատին նվիրված ցուցահանդեսի, որը մեկ տարի առաջ նախաձեռնել էր Իգիթյանը: Եվ կարծում եմ, որ այս ցուցահանդեսից հետո մեկ անգամ եւս կանդրադառնանք Հենրիկ Իգիթյան անունին եւ իր շարունակական գործերին»:**

**Ավաղ, այսօր մեզ հետ չէ Հենրիկ Իգիթյանը, սակայն նրա կատարած ազգանվեր գործը սերունդների համար մնաց ազգային կարեւորագույն արժեք: Հենրիկ Իգիթյան արվեստագետը կարողացել է իր սաներին հայեցի դաստիարակություն ու ազգային արժեքների նկատմամբ սրտացավ ու պահպանողական սեր սերմանել:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Բուենոս Այրեսը՝ գրքի համաշխարհային 11-րդ մայրաքաղաք

**Գրքի համաշխարհային մայրաքաղաքի կոչումը 2011 թվականի համար շնորհվել է Բուենոս Այրեսին: Համապատասխան որոշումը կայացրել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր գրասենյակում: Ընտրությունը կատարել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Հրատարակիչների միջազգային միության, Գրավաճառների միջազգային ֆեդերացիայի եւ Գրադարանային ընկերությունների ու հաստատությունների ֆեդերացիայի մասնագետները: Նրանց տեսանկյունից Արգենտինայի մայրաքաղաքի ներկայացրած ծրագրի որակն ու բազմազանությունը եղել են այնչափ բարձրակարգ, որ Բուենոս Այրեսն արժանացել է «Գրքի համաշխարհային մայրաքաղաք 2011» կոչմանը, որը գործում է գրքի միջազգային օրվանից՝ ապրիլի 23-ից մեկ տարի ժամկետով:**

**Բուենոս Այրեսը գրքի համաշխարհային 11-րդ մայրաքաղաքն է, մինչ այդ նույն տիտղոսը կրել են Մադրիդը (2001), Ալեքսանդրիան (2002), Նյու-Դելին (2003), Անտվերպենը (2004), Մոնրեալը (2005), Թուրինը (2006), Բոգոտան (2007), Ամստերդամը (2008), Բեյրութը (2009) եւ Լյուբլյանան (2010):**

Ն. Պ.

# Գերմանիայում կայացած բարեգործական համերգի հասույթը կհատկացվի Նոյեմբերյանի շրջանային հիվանդանոցի վերակառուցմանը



**Գերմանիայի Քյոլն քաղաքից ոչ հեռու գտնվող «Հաուս Բուրգպարկ» սրահում տեղի է ունեցել «Հայաստան» համահայկական հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնի ստեղծման 15-ամյակին նվիրված հանդիսավոր համերգ՝ Փարիզի վաստակավոր «Նավասարդ» պարային համույթի (հիմնադիր՝ Էտի Ճոլոլեան) մասնակցությամբ. համույթը սիրված եւ սպասված է Եվրոպայի հայկական բոլոր համայնքներում:**

**Համերգից ստացված գումարը կուղղվի Նոյեմբերյանի շրջանային հիվանդանոցի վերակառուցմանը:**

**Բարեգործական միջոցառումը կայացավ հիմնադրամի Գերմանիայի, Շվեյցարիայի տեղական մարմինների, Գերմանիայում գործող «Գործատուների միության» եւ «Բժիշկների ու բուժաշխատողների միության» աջակցությամբ:**

**Հանդիսավոր միջոցառումը մեկնարկեց հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնի 15 տարիների ընթացքում իրականացրած բարեգործական ծրագրերի մասին պատմող ֆիլմի դիտումով: Իր շնորհակալական խոսքում հիմնադրամի տեղական մարմնի ատենապետ Ժիլբեր Մոմջյանը նկատեց, որ հիմնադրամն իր 15 տարիների գործունեության ընթացքում շարունակում է մնալ աշխարհի հայության համախմբման ամուր օղակներից մեկը:**

**Պատվավոր հյուրերի թվում էին նաեւ հիմնադրամի Շվեյցարիայի եւ Հոլանդիայի տեղական մարմինների ատենապետեր Ավետիս Կիզիրյանն ու Նուբար Սեփոյանը, Հայոց ցեղասպանության ճանաչման մեծ ջատագով գերմանաբնակ հրեա Ռալֆ Ջորդանոն, կազմակերպությունների ղեկավարներ ու պաշտոնատար անձինք: Հանդիսատեսի երկար ու ջերմ ծափահարությունները հաջորդում էին համույթի յուրաքանչյուր կատարմանը. Շուրջ 800 հանդիսատես այդ օրը վայելում էր Եվրոպայում արդեն իսկ մեծ ճանաչում ունեցող պարային համույթի գեղեցիկ կատարումները:**

**«Ուրախալի է, որ բարեգործական համերգ-միջոցառումների արդյունքում հավաքված գումարներով նոր ծրագրերի սկիզբ է դրվում. այս անգամ հերթը Նոյեմբերյանի շրջանային հիվանդանոցինն է», նշում է «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը:**

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# «Եվրատեսիլ 2009»-ում Ուկրաինան կներկայացնի հայ պատանին

11-ամյա Անդրանիկ Ալեքսանյանը, որ բնակվում է Խմելնիցկում, մանկական «Եվրատեսիլ 2009» երգի մրցույթում ներկայացնելու է Ուկրաինան: Այս մասին հաղորդում է Analitika.at.ua-ն: Անդրանիկը հաղթող է ճանաչվել ազգային հեռուստա եւ sms քվեարկություններում, որի արդյունքները հրապարակել է Ուկրաինայի վարչապետ Յուլիա Տիմոշենկոն: Նա նաեւ տեղեկացրել է, որ եկող տարի նույնպես մրցույթի մասնակիցները հնարավորություն կունենան հանգստանալու «Արտեկ» մանկական կենտրոնում:

Ամենամյա մանկական այս մրցույթն անցկացվում է 2003 թվականից, յուրաքանչյուր երկրի մեկական 10-15 տարեկան ներկայացուցչի մասնակցությամբ:

Ն. Պ.

# Թանգարանների ցուցադրություններից օգտվելու նոր աշխատաժամեր

Ինչպես տեղեկացանք ՀՀ մշակույթի նախարարության հասարակայնության հետ կապերի պատասխանատու **Կարինե Դուրգարյանից՝ զ**բոսաշրջության զարգացման, հասարակության կողմից ազգային արժեքներին հաղորդակցվելու, ցուցադրությունների մատչելիությունն ապահովելու նպատակով հունիսի 15-ից նոյեմբերի 1-ը Երեւանում գործող ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարանները այցելուներին սպասարկելու են ժամը 11.00-19.00:

Ս. Ս.

# «Միկան» շարունակում է «Փյունիկի» հետապնդումը

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 12-րդ տուրում կենտրոնականն «Ուլիսի» եւ «Միկայի» մրցավեճն էր: Երկու թիմերն էլ հաղթելու վճռականությամբ էին խաղադաշտ դուրս եկել: Առաջինը հաջողության հասավ «Միկան»: Արդեն 5-րդ րոպեին բրազիլացի Ալեքսի տուգանային հարվածից հետո Արամ Ոսկանյանը գլխի հարվածով բացեց հաշիվը: Գոլը չընկճեց ուլիսցիներին, որոնք մեծ ուժերով գրոհում էին: Եվ ընդամենը 6 րոպե անց հաշիվը հավասարեցվեց: Կարեն Մուրադյանի ճշգրիտ փոխանցումից հետո Գագա Թբիլաշվիլին գրավեց «Միկայի» դարպասը:

Առաջին խաղակեսում եւս երկու վտանգավոր պահ գրանցվեց: Նախ քիչ էր մնում սխալվեր «Միկայի» դարպասապահ Սոսո Գրիշիկաշվիլին ու Արտյոմ Ադամյանը պատժեր նրան: Հետո գոլ խփելու լավ առիթ ներկայացավ «Միկայի» հարձակվող Արա Հակոբյանին, սակայն հյուրերի դարպասապահ Մանվել Աֆրիկյանը հետ մղեց գնդակը:

Ընդմիջումից հետո եւս դաշտում հավասար պայքար էր ընթանում: 60-րդ րոպեին 2-րդ դեղին քարտը ստանալով, դաշտից հեռացվեց ուլիսցի Կարեն Ալեքսանյանը: «Միկային» հաջողվեց իրացնել թվային առավելությունը: Կրկին վարպետ խաղով աչքի ընկավ միկացիների ավագ Արամ Ոսկանյանը, որը դժվարին դրությունից, պառկած վիճակում գլխի հարվածով խփեց հաղթական գոլը: «Ուլիսը» կարող էր փրկել խաղը, սակայն Արմեն Տիգրանյանի հարվածը դիպավ դարպասի հորիզոնական ձողին:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Սամվել Դարբինյան («Միկա»)**-Հաճելի է, երբ հանդիպումն անցնում է նման լարված պայքարում: Դա նպաստում է թիմերի խաղամակարդակների աճին, առաջնության նկատմամբ հետաքրքրասիրությանը: Արդեն 2-րդ խաղում ենք արագ գոլ խփում, ինչը հոգեբանորեն որոշ չափով կաշկանդում է մեր ֆուտբոլիստներին, որոնք շատ շուտ են հավատում վերջնական հաղթանակին: Թիմի առջեւ լուրջ խնդիրներ են դրված, ինչը որոշակի լարվածություն է ստեղծում: Մեզ համար այժմ շատ կարեւոր է հաղթել ու «Փյունիկից» հետ չմնալ: Կան վնասվածք ունեցող ֆուտբոլիստներ: Այդ պատճառով այսօրվա խաղում բացակայում էր Բոտի Դեմելը: Վիրահատությունից եւ բուժզննումից հետո թիմին են միացել Ալեքսանդր Թադեւոսյանն ու Նիկիտա Ֆուրսինը: «Ուլիսը» լավ կազմակերպված թիմ է, որին հաջողություն եմ մաղթում:

**Սեւադա Արզումանյան («Ուլիս»)**-Այսօրվա խաղում «Ուլիսի» համար ճակատագրական 3 պահ տեղի ունեցավ: Առաջինն արագ բաց թողած գոլն էր, երկրորդը` Կարեն Ալեքսանյանի հեռացումը, երրորդը` մեր պաշտպանների կողմից սխալը, որի հետեւանքով 2-րդ գոլը բաց թողեցինք ու պարտվեցինք: Իհարկե, ցավալի է նման լավ խաղով պարտվելը: Հարկավոր է շուտ մոռանալ այս պարտությունը եւ նախապատրաստվել հաջորդ հանդիպումներին` լավ խաղն ամրապնդելով արդյունքով: Երեւի շուտով մեզ միանա դարպասապահ Գեւորգ Կասպարովը, որը խաղում է Իրանում:

Այս հաղթանակի շնորհիվ «Միկան» կրճատեց միավորների տարբերությունը «Փյունիկից», որը սեփական հարկի տակ չկարողացավ հաղթել «Գանձասարին»: Այդ խաղում դարպասները մնացին անառիկ: Ոչ մի կերպ չի հաջողվում միավոր վաստակել «Արարատին»: «Բանանցի» հետ խաղում արդեն 3-րդ րոպեին Հրանտ Գեւորգյանը գրավեց «Արարատի» դարպասը, իսկ խաղավերջում Սամվել Մելքոնյանը 2-րդ գոլը խփեց: «Կիլիկիայի» եւ «Շիրակի» մրցավեճում գրանցվեց ոչ-ոքի` 1-1: Առաջինը հաջողության հասան շիրակցիները, որոնցից աչքի ընկավ Արա Մկրտչյանը: «Կիլիկիային» պարտությունից փրկեց Ռաֆայել Մկրտչյանը:



### Մրցաշարային աղյուսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փյունիկ | 11 | 9 | 2 | 0 | 27-6 | 29 |
| 2. Միկա | 11 | 8 | 2 | 1 | 22-9 | 26 |
| 3. Բանանց | 11 | 8 | 0 | 3 | 20-11 | 24 |
| 4. Ուլիս | 12 | 6 | 2 | 4 | 16-10 | 20 |
| 5. Շիրակ | 12 | 3 | 3 | 6 | 12-24 | 12 |
| 6. Գանձասար | 12 | 3 | 2 | 7 | 7-19 | 11 |
| 7. Կիլիկիա | 12 | 3 | 1 | 8 | 11-19 | 10 |
| 8. Արարատ | 11 | 0 | 0 | 11 | 3-20 | 0 |

### Ռմբարկուները

| | | |
|---|---|---|
| Հենրիխ Մխիթարյան | «Փյունիկ» | 11 |
| Բոտի Դեմել | «Միկա» | 8 |
| Արամ Ոսկանյան | «Միկա» | 7 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 6 |

# Իսպանացիների տպավորիչ մեկնարկը

Հարավաֆրիկյան Հանրապետությունում, որտեղ հաջորդ տարի կայանալու է ֆուտբոլի աշխարհի առաջնությունը, մեկնարկել է կոնֆեդերացիաների գավաթի հերթական խաղարկությունը: Մասնակից ութ հավաքականները նախնական փուլում բաժանվել են 2 խմբի: «A» խմբում հանդես են գալիս Իսպանիայի, Իրաքի, ՀԱՀ-ի եւ Նոր Զելանդիայի հավաքականները, «B» խմբում մրցավեճի կբռնվեն Բրազիլիայի, Եգիպտոսի, Իտալիայի եւ ԱՄՆ-ի ընտրանիները:

Հերթական մրցաշարը 8-րդն է: Նման մրցաշար անցկացնելու գաղափարը տվել է Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը, որը տարածաշրջանում ֆուտբոլի նկատմամբ հետաքրքրասիրությունը մեծացնելու նպատակով էր այն կազմակերպել: Բացի դաշտի տերերից, մրցաշարին մասնակցեցին Կոտ դ՛Իվուարի, ԱՄՆ-ի եւ Արգենտինայի հավաքականները: Սակայն ՖԻՖԱ-ն պաշտոնական չէր համարում մրցաշարը:

Միայն 1997-ին մրցաշարն անվանվեց Կոնֆեդերացիաների գավաթ: Հարավային Ամերիկան ներկայացրել էին Բրազիլիայի եւ Արգենտինայի հավաքականները, Եվրոպայից մասնակցում էին չեխերը, երեք հավաքական էլ հանդես էին գալիս Ասիայից: ՖԻՖԱ-ն իր հովանու տակ առավ մրցաշարը: 2005-ից սկսած մրցաշարն անցկացվում է այն երկրում, որտեղ հաջորդ տարի պետք է կայանա աշխարհի առաջնությունը:

Եվրոպայի չեմպիոն իսպանացիները տպավորիչ հաղթանակով մեկնարկեցին` 5-0 հաշվով ջախջախելով Նոր Զելանդիայի հավաքականին: Իսպանացիներից հեթ տրիկի հեղինակ դարձավ Ֆեռնանդո Տորեսը, մեկական գոլ խփեցին Սեսկ Ֆաբրեգասն ու Դավիթ Վիյան: Իսկ ահա «A» խմբի մյուս խաղում Իրաքի եւ ՀԱՀ-ի հավաքականներին այդպես էլ չհաջողվեց բացել հաշիվը:

## Հայերից լավագույնը Լիլիթ Գալոյանի արդյունքն է

**Թբիլիսիում ավարտվեց շախմատի Մայա Չիբուրդանիձեի անվան գավաթի մրցաշարը: Հայաստանը ներկայացրած 3 շախմատիստուհիներից լավագույնը հանրապետության չեմպիոնուհի Լիլիթ Գալոյանի արդյունքն էր: 9 հնարավորից վաստակելով 6 միավոր, Լիլիթը զբաղեցրեց 7-րդ տեղը: Լիլիթ Մկրտչյանը 5,5 միավորով 12-րդ տեղում է, իսկ Սիրանուշ Անդրեասյանը 5 միավորով գրավեց 19-րդ հորիզոնականը: Հաղթող ճանաչվեցին վրացի երկու շախմատիստուհիներ` Բելա Շոթենաշվիլին ու Լելա Ջավախիշվիլին, որոնք վաստակեցին հավասար` 7 միավոր:**

## 42 մլն եվրո Դավիթ Վիյայի համար

Մադրիդի «Ռեալը» մտադիր չէ ավելացնել Դավիթ Վիյայի համար «Վալենսիային» առաջարկվող գումարը: «Ռեալը» հարձակվողի համար 42 մլն եվրո է առաջարկել, մինչդեռ «Վալենսիան» 50 մլն է պահանջում: Եթե կողմերը համաձայնության չգան, ապա Ֆլորենտինո Պերեսը պատրաստ է Վիյայի փոխարեն թիմ հրավիրել «Ատլետիկոյի» ուրուգվայցի հարձակվող Դիեգո Ֆոռլանին, որն այս մրցաշրջանում արժանացավ Եվրոպայի լավագույն ռմբարկուի «Ոսկե խաղակոշիկ» մրցանակին:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# Պարգեւներ նաեւ բռնցքամարտիկներին

**Երեւանում վերջերս անցկացված բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը նոր ռեկորդով նշանավորվեց հայկական բռնցքամարտի պատմության մեջ: Հայաստանի յոթ բռնցքամարտիկներ դարձան մրցանակակիրներ (1 ոսկե, 2 արծաթե, 4 բրոնզե մեդալ): Երեկ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը հերթական պարգեւները հանձնեց աշխարհի առաջնությունում աչքի ընկած**




**յոթ բռնցքամարտիկներին, նրանց անձնական մարզիչներին, պատանեկան հավաքականի մարզիչներին: Դրամական պարգեւներ ստացան պատանիների աշխարհի չեմպիոն Կորյուն Սողոմոնյանն ու նրա անձնական մարզիչ Սամվել Սողոմոնյանը, 2-րդ մրցանակակիրներ Ջոնիկ Տոնոյանը, Հայկ Խաչատրյանը, բրոնզե մեդալակիրներ Արթուր Քաջոյանը, Ալեքսան Նազանյանը, Վոլոդյա Հայրապետյանը եւ Գոռ Մարգարյանը, նրանց անձնական մարզիչներ Գագիկ Բաղդասարյանը, Արթուր Գեղամյանը, Դերենիկ Ոսկանյանը, Ազատ Հայրապետյանը, Վահան Աղինխանյանը, ինչպես նաեւ պատանեկան հավաքականի գլխավոր մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանը:**

**Շնորհավորելով պարգեւատրվածներին, Գագիկ Ծառուկյանը մասնավորապես նշեց. «Աշխարհի առաջնության մասնակիցներն իրենց հիացմունքն են հայտնել մեր ազգի հյուրասիրությունից, մրցաշարի կազմակերպման եւ անցկացման մակարդակից: Մենք աշխարհին ապացուցեցինք, որ ոչ միայն կարող ենք լավ կազմակերպել նման խոշոր մրցաշարեր, այլեւ լավ հանդես գալ: Դա մեզ հնարավորություն է տալիս հայտ ներկայացնելու նաեւ առաջիկա տարիներին Երեւանում աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններ կազմակերպելու համար: Շնորհավորում եմ մեր բռնցքամարտիկներին եւ մաղթում նորանոր հաղթանակներ»:**

**Իրենց շնորհավորանքները հղեցին նաեւ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արմեն Գրիգորյանն ու բռնցքամարտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Արման Մուրադյանը: Նրանք նշեցին, որ վերջին երկու տարիներին մարզաձեւում զգալի առաջընթաց է նկատվում, ինչը մարզիկների եւ մարզիչների քրտնաջան աշխատանքի արդյունք է: Նաեւ շնորհակալություն հայտնեցին Գագիկ Ծառուկյանին մշտապես մարզիկներին աջակցելու եւ խրախուսելու համար: Ֆեդերացիայի նախագահը Գագիկ Ծառուկյանին պարգեւատրեց գավաթով, հուշամեդալով, դիպլոմով ու հուշանվերով: Առաջնության կազմակերպիչներից, մարզիչներից, ՀԱՕԿ-ի նախագահից ու բռնցքամարտի ֆեդերացիայի ղեկավարությունից իր շնորհակալությունը հայտնեց նաեւ Հայաստանի պատանեկան հավաքականի գլխավոր մարզիչ Ֆեդյա Ալեքսանյանը:**

# Կոբի Բրայանտը վերադարձավ չեմպիոնական բաժակը



**Եզրափակիչ հինգերորդ խաղում 99-86 հաշվով հաղթելով «Օռլանդո Մեջիկին», «Լոս Անջելես Լեյկերսի» բասկետբոլիստները ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության պատմության մեջ 15-րդ անգամ նվաճեցին չեմպիոնի տիտղոսը: «Լոս Անջելես Լեյկերսը» մրցախաղը շահեց 4-1 հաշվով: «Օռլանդո Մեջիկին» միայն մեկ անգամ, այն էլ սեփական հարկի տակ հաջողվեց առավելության հասնել մրցակցի նկատմամբ` 3-րդ հանդիպումը շահելով 108-104 հաշվով:**

**Ինչպես եւ նախորդ հանդիպումներում, այս անգամ էլ իր արդյունավետ խաղով աչքի ընկավ Կոբի Բրայանտը: Նա իր թիմին 30 միավոր պարգեւեց: Պատահական չէ, որ Բրայանտը ճանաչվեց մրցաշարի լավագույն բասկետբոլիստ: Նա 7 տարի անց կրկին նվաճեց չեմպիոնի տիտղոսը, որը նրա մարզական կարիերայում 4-րդն էր:**

**«Շատ դժվար էր չեմպիոնի տիտղոսը նվաճելը: Մենք սկսել ենք նույնիսկ ոչ թե զրոյից, այլ մինուսից: Եվ ահա մենք կրկին հաղթեցինք: Ինձ այս ամենը երազ է թվում», նշել է Կոբի Բրայանտը:**

**Յուրօրինակ ռեկորդակիր դարձավ նաեւ «Լոս Անջելես Լեյկերսի» մարզիչ Ֆիլ Ջեքսոնը: Նրա գլխավորած թիմերը 10-րդ անգամ նվաճեցին չեմպիոնի տիտղոսը: 6 անգամ նա չեմպիոնական բաժակին է հասցրել «Չիկագո Բուլզին», 4 անգամ` «Լոս Անջելես Լեյկերսին»: Նախկին ռեկորդը պատկանում էր «Բոստոնի» լեգենդար մարզիչ Ռեդ Աուերբախին:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 6/15/2009 10:52 PM Page 1



# Կոնգրեսը գնաց «վաստակած հանգստի»

*1-ին էջից*

Տեր-Պետրոսյանը, արձակուրդ գնալուց առաջ, համագործակցության 12 կետանոց մի պլատֆորմ առաջարկեց, որի կետերը քչփորելով՝ մի քանիսն անտրամաբանական համարեցինք ներկա քաղաքական իրավիճակում, քանի որ դրանց հանդեպ ժամանակին Տեր-Պետրոսյանի ղեկավարած իշխանության կեցվածքը հիշում ենք: Այդ 12 կետերից արժանահիշատակ են մարտի 1-ի դեպքերի եւ մեղավորների բացահայտման հետ կապվածները, ինչպես նաեւ արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրություններին վերաբերողները, ինչպես նաեւ Սերժ Սարգսյանի անհապաղ հրաժարականի պահանջները: Թեեւ վերջին երկու կետը եւս պարզապես գոնե այս պահի համար ժամանակավրեպ են, քանի որ քաղաքային ավագանու ընտրությունները (ընտրություն համարենք դա, թե մարդկանց համակերպման արդյունք, մեկ է), այնպիսի քաղաքական իրավիճակ են ստեղծել, որ այդպիսի կետեր առաջարկելը, այն էլ ընդդիմադիր մյուս երկու ուժերին (ՀՅԴ եւ «Ժառանգություն»), առնվազն կոռեկտ չէ, թեեւ 12 կետերի շուրջ կոնգրեսը պատրաստակամություն է հայտնել յուրաքանչյուր քաղաքական ուժի հետ համագործակցել. Տեր-Պետրոսյանը, թյուրիմացություններից խուսափելու համար, շեշտում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե կոնգրեսի, այլ քաղաքական պլատֆորմի կամ գործողությունների ծրագրի շուրջ միավորվելուն: Դա նշել է համենայն դեպս, որովհետեւ էլ չի կարող ասել, չէ՞, ՀԱԿ-ը միակ ընդդիմադիրն է: Եվ դրանից էլ առաջ, էլ ավելի զգուշանալով՝ ասել էր, թե ՀԱԿ-ը երբեւէ ընդդիմադիր դաշտում ամբողջատիրություն հաստատելու կամ մյուս քաղաքական ուժերին իր մեջ ձուլելու մտադրություն չի ունեցել եւ այսօր էլ չունի:

Չունի՝ չունի, ունենա էլ՝ չի կարող, որովհետեւ այժմ արդեն նոր ձեւաչափեր են ստեղծվելու, ընդդիմության պատկեր եւ ուրվագիծ է փոխվելու, դեռ կարող է պատահել, որ ՀԱԿ-ի հետ չուզենան համագործակցել դոմինանտ դառած մյուս ընդդիմադիր ուժերը:

Ինչ էր ասել նորաթուխ ընդդիմադիր ՀՅԴ-ն ներկայացնող Վահան Հովհաննիսյանը. «Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ նրա իրական արբանյակները չեն կարող որեւէ մեկի հետ համագործակցել՝ չլինելով պապայի դերում, իսկ նրան պապայի դերում ՀՀ ոչ մի նորմալ քաղաքացի չի կարող տեսնել: Մենք էլ այս պայմաններում նրա հետ համագործակցության որեւէ դաշտ չունենք»: Խնդալու կամ լալու, կարծեմ, պատճառ՝ չիք:

ՀԱԿ-ից Կարապետ Ռուբինյանը, որ առավել պրագմատիկ գործչի համբավ ունի, երեկ նվազ հույս է հայտնել, որ Դաշնակցությունն ու «Ժառանգություն» կուսակցությունը կարձագանքեն ՀԱԿ առաջնորդ Տեր-Պետրոսյանի առաջարկին՝ քաղաքական պլատֆորմ ստեղծելու մասին: Բայց Տեր-Պետրոսյանի փորձառությունը եւս բարձր մակարդակի վրա է, եւ նա հասկանում է, որ ՀԱԿ-ի գնացքը եթե արդեն չի գնացել, ապա արդեն շարժվում է, եւ հարցն այն է, թե նրա մեջ արդյոք տեղ կա՞ ՀԱԿ-ի համար: Այդ նրբաշեշտը երեկ իր ասուլիսում դրեց նաեւ «Նոր ժամանակների» Արամ Կարապետյանը, որը որսացել էր Տեր-Պետրոսյանի տոնայնության նրբերանգները, նրա ելույթն «ունիսոն» անվանելով, երբ Տեր-Պետրոսյանն ասել էր, թե պապաներ ու երեխաներ բացառվում են, բոլորը հավասար են (Վ. Հովհաննիսյանի ականջը կանչի):

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ ՀԱԿ-ը եւս անցնում է երկարատեւ, դիրքային պայքարի՝ գուցեեւ հաջորդ, հերթական ընտրությունների համար: Այդ դեպքում անիմաստ է դառնում «անհապաղ հրաժարականն» ու «արտահերթ խորհրդարանականն ու նախագահականը», անիմաստ՝ այս նահանջներ պարունակող մտքերի հետ համադրված: Թարսի պես էլ Սերժ Ազատիչն ու Դմիտրի Անատոլեւիչը փիփ-փիփ ասուլիս էին տալիս, ու Հայաստանի նախագահին իրեն բավական վստահ էր պահում, ու ոչ մի կերպ չէր զգացվում, որ նա ՀԱԿ-ական ընդդիմության ասած՝ արտաքին եւ ներքին մարտահրավերների ճնշող օղակ ունեցող երկրի նախագահ է:

Առհասարակ՝ Տեր-Պետրոսյանի վերջին ելույթը լի է հակասություններով, կարծես թե նա հասկացել է, որ ճանապարհը նրան տարել է ոչ մի տեղ, եւ «թայմ աութ» վերցնելով՝ նա կարծես ուզում է դուրս գալ այդ «ոչ մի տեղից» ու ինչ-որ կետից նորից որոնել լաբիրինթոսից դուրս գալու ուղին: Կարելի է ասել՝ մի տեսակ պատվավոր նահանջ, գոնե այս երկու ամիսը:

Իշխանական դաշտում եւս հանգիստ մտորելու եւ եզրակացություններ հանգելու կարիքը կա: Կոալիցիան եւ կա, եւ չկա: Եվ էլի քաղաքային ավագանու ընտրություններից հետո եռաթեւ կոալիցիայի առնվազն երկու թեւերը սթափ վերլուծությունների եւ իրենց գործընկեր ՀՀԿ-ից պարզաբանումներ եւ խոստումներ ստանալու, կամ էլ հակառակը, նրա կոշտ վերաբերմունքից եզրահանգումների գալու խնդիր ունեն, որից հետո աշնանը նոր դիմագծով կներկայանա հանրությանը:

Հայաստանի քաղաքական դաշտը ղեկավարող իշխանական պլուտոկրատիան այս ամառ իր խնդիրները լուծելու կարիք ունի՝ մի մասը, առաջին մակարդակի կապեր չունեցողների շերտը, խնդիր ունի թույլ չտալ իր հաշվին ուրիշների ընդլայնումը, մյուսը՝ իշխանական օթյակներին առավել մոտ կանգնածը, առավել ընդլայնվելու անհագ ցանկություն, քանզի Հայաստանում քաղաքական իշխանություն, իր մաքուր իմաստով, գոյություն չունի՝ ով հզոր է տնտեսապես, նա էլ քաղաքականություն է անում: Որքան էլ զարմանալի է՝ ուժեղացման կամ թուլացման անկյունաքարը կդրվի հարկային փաթեթի ընդունումից, որը մեր կարծիքով ոչ թե նրա համար է ընդունվելու, որ սկզբունքորեն կիրառվի օրենքի շրջանակին ենթակա բոլորի նկատմամբ, այլ հատկապես անցանկալիների հանդեպ: Կհաղթի՞ կառավարությունը, սա նշանակելու է, որ իշխանությանը մոտ կանգնած սակավ գործարարներն են շահելու, իսկ մյուսներին ցույց է տրվելու օրենքը, կհաղթեն այլ հովերը, նշանակում է իշխող ուժը խնդիրներ կունենա մի անգամ եւս կրկնելու ողջ գործընթացը:

Իսկ խորհրդարանական ընդդիմադիր ուժերը՝ «Ժառանգությունն» ու իր ընդդիմադիր իրավունքները դեռեւս հաստատելու խնդիր ունեցող ՀՅԴ-ն արդեն իսկ ՀԱԿ-ից առավել շահեկան վիճակում են լինելու, քանի որ Ազգային ժողովում լինելը նրանց մշտապես ապահովելու է լսարանով, իսկ ՀԱԿ-ն անգամ քաղաքային ամբիոնից է հրաժարվում, ինչն, ի դեպ, ըստ որոշ լուրերի, չեն ողջունում նրանց արեւմտյան հովանավորները՝ ի դեմս Հայաստանում ներկա որոշ դեսպանատների:

*Հ.Գ. Վերն ասվածը մի ավելորդ անգամ շեշտում է մի տխուր իրողություն՝ Հայաստանի ժողովուրդն իրականում ոչ մի կապ չունի եւ մասնակից չէ քաղաքական գործընթացներին:*

# Թիվ 08/05 տեղամասի գործի քննությունը կսկսվի 16-ին

Մայիսի 31-ի Երեւանի ավագանու ընտրությունների կապակցությամբ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան հունիսի 10-ին մուտքագրվել է քրեական գործ, որով Նորիկ Միշայի Եղիազարյանը եւ Արմեն Հայկազի Օհանյանը մեղադրվում են քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով («Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը»): Այս մասին «Արմենպրեսին» հայտնեց Վճռաբեկ դատարանի մամուլի քարտուղարը: Նշված քրեական գործով առաջին դատական նիստը կկայանա հունիսի 16-ին, Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանում: Հիշեցնենք, որ համաձայն մեղադրական եզրակացության՝ Ն. Եղիազարյանը եւ Ա. Օհանյանը մեղադրվում են, որ լինելով Երեւանի ավագանու ընտրությունների ընթացքում ձեւավորված թիվ 8 ընտրատարածքի 5-րդ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ, մայիսի 31-ին թվով 16 ընտրողների կողմից քվեաթերթիկները քվեատուփերի մեջ անձամբ չգցելու հանգամանքից օգտվելով՝ քվեաթերթիկները պատճենահանելու միջոցով քվեարկել են Հանրապետական կուսակցության օգտին:

# Կդադարեցվի Հայաստան բնական գազի մատակարարումը

**Վրաստանի գազատրանսպորտային ընկերությունը պաշտոնապես տեղեկացրել է «Հայռուսգազարդին»՝ հունիսի 16-21-ը Հայաստան բնական գազի մատակարարումը դադարեցնելու մասին: Այդ օրերին վրացական ընկերությունը նախատեսում է իրականացնել Ղազախ-Սագուրամո 1000 մմ տրամագծով 3,6 կմ երկարությամբ նոր կառուցված հատվածի միացման աշխատանքները, որոնք կնպաստեն Հայաստանի գազամատակարարման հուսալիության բարձրացմանը: Այս ընթացքում հանրապետության գազամատակարարումը կիրականացվի Աբովյանի ստորգետնյա գազապահեստ-կայանից՝ առանց սահմանափակումների:**

ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Դասախոսական կազմի ընդունելություն Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամում (ՀՖՀՀ)

Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը միջպետական բուհ է, որը շնորհում է Ֆրանսիայի եւ Հայաստանի պետական նմուշի դիպլոմներ (Licence/Բակալավրիաս, Master/Մագիստրատուրա), որոնք հաստատված են Բոլոնիայի համաձայնագրով:

2009-2010 ուստարվա ընդունելության համար Հայաստանում ֆրանսիական համալսարանն աշխատանքի է հրավիրում դասախոսների հետեւյալ առարկաների գծով.

Իրավաբանություն

Ֆինանսներ, հաշվապահություն, աուդիտ

Մարքեթինգ

Տնտեսագիտություն

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) ֆրանսերեն եւ ուսանողների ղեկավարման համար պատասխանատու փորձառու դասախոս (նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործում)

Ընդհանուր եւ մասնագիտական (Իրավաբանություն, Մարքեթինգ, Կառավարում) անգլերեն

Ներկայացվող պահանջները

✓ Գիտությունների թեկնածու
✓ Մասնագիտական փորձ
✓ Դասավանդման փորձ
✓ Ֆրանսախոս կամ անգլախոս

Աշխատավարձը կախված է որակավորումից:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը ՀՖՀՀ-ի գլխավոր քարտուղար պ. Ալեքսանդր Մարտինետիին, **secretaire_general@ufar.am**

- ինքնակենսագրություն (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)
- մոտիվացիոն նամակ (հայերեն, ֆրանսերեն եւ անգլերեն)

Դիմումները ներկայացնել մինչեւ 2009թ-ի հունիսի 30-ը:

Հարցազրույցի կհրավիրվեն ընտրված թեկնածուները:

ՀՖՀՀ-ին մանրամասն ծանոթանալու համար այցելել մեր ինտերնետային կայք www.ufar.am կամ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 10:00-17:00, (010) 24 96 64:

## Վաճառվում է կամ տրվում է վարձով

109 հեկտար հողատարածք Մարգարայի խճուղու մոտ, Էջմիածին քաղաքից շուրջ 5 կմ հեռավորության վրա: Տարածքում կա 6 գոմ, երկհարկանի վարչական շենք, մայրուղու վրա չգործող բենզալցակայան, մեքենաների վերանորոգման բոքսեր, մշակելի հողատարածք՝ մոտ 400 պտղատու ծառերով: Գինը՝ շուկայականից ցածր:

Հետաքրքրվողները կարող են զանգահարել 6-89-99, 52-65-02 կամ 093-095790 հեռախոսահամարներով:

## Ֆուտբոլի Զարգացման Բարեգործական հիմնադրամի 2008 թ.-ի ֆինանսական տարվա ցուցանիշները

| | |
|---|---|
| Դրամական միջոցների մնացորդ 01.01.08 թ. դրությամբ | 315,0 հազ. դրամ |
| Եկամուտներ | Ծախսեր |
| - | 19,0 հազ. դրամ |
| Դրամական միջոցների մնացորդը 01.01.09 թ. դրությամբ | 296,0 հազ. դրամ |

Գործադիր տնօրեն Մ. Զաֆարյան

**Տեղեկանք**

Ֆուտբոլի Զարգացման բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, կառավարիչը եւ հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձինք 2008 թ.-ին չեն օգտվել հիմնադրամի միջոցներից եւ նրա ծառայություններից: 2008 թ. ֆինանսական տարում որեւիցե բարեգործական ծրագիր չի իրականացվել:




**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 15.06.2009 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 369.08 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 512.14 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 11.80 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 223.94 |

www.
azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: